Azg Ազգ

2 ՄԱՅԻՍ 2007 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ 80 (3732)

Ռուանդայի ցեղասպանությանը նվիրված ցուցահանդեսում անդրադարձ կա Հայոց մեծ եղեռնին

ՄԱԿ-ի կենտրոնակայանում երկուշաբթի օրը բացվել է Ռուանդայի ցեղասպանությանը նվիրված ցուցահանդեսը: Հիշեցնենք, որ երեք շաբաթ առաջ ցուցահանդեսը հետաձգվել էր՝ Հայոց մեծ եղեռնի հիշատակման դեմ Թուրքիայի առարկությունների պատճառով: Դրան հաջորդել էին միջազգային կազմակերպությունների եւ հայկական համայնքների բողոքները՝ ուղղված ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին: Ընթացիկ ցուցահանդեսում Հայոց ցեղասպանությանն անդրադարձող ցուցատախտակներից մեկում վերաձեւակերպում է կատարվել՝ «Թուրքիայում» բառը փոխարինվել է «Օսմանյան կայսրությունում» բառերով: «Ռոյթեր» գործակալության տեղեկացմամբ, նաեւ հանվել է ցեղասպանությանը զոհ գնացած հայության թիվը:

Մատենադարանի ձեռագրերն օտարի ձեռքի տակ չե՞ն հայտնվի

Բավական վստահելի մեր աղբյուրների վկայակոչմամբ մեր ազգային հարստություն ձեռագրերի թվայնացման հուշագիրն ի չիք կդառնա եւ այս մի քանի օրն այդ իրադարձությունը կհրապարակայնացվի:

Հիշեցնենք, որ ապրիլի 13-ին Մատենադարանի ղեկավարության եւ Մ. Նահանգների Սուրբ Հովհաննես վանքի համալսարանի Հիլլ թանգարան-գրադարանի միջեւ հուշագիր էր ստորագրվել, որի համաձայն վերջինս Մատենադարանի գանձերը թվայնացնելու եւ Մատենադարանի համաձայնությամբ դրանք ուսումնասիրողներին տրամադրելու իրավունք էր ստանում: Մինչդեռ հստակ չէր՝ մեր Մատենադարանը համաձայնագրի ստորագրումից հետո իրավունք ունենալո՞ւ էր ձեռագրերի պատճեններն ինքնուրույն օգտագործելու: Այսքիսով, կարելի է ասել, որ հուշագրի շուրջն առաջացած հասարակական մեծ աղմուկը պսակվեց գործարքին ընդդիմացողների հաղթանակով:

Թվայնացման խնդրի վերաբերյալ վերջին քննարկման ժամանակ, որին մասնակցել են ՀՀ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Գառնիկ Իսագուլյանը եւ այս ասպարեզի փորձագետ-վերլուծաբաններ, որոշվել է ստեղծել աշխատանքային խումբ, որը կմշակի ձեռագրերի թվայնացման տարբերակների եւ ֆինանսներ գտնելու ծրագիրը:

Մյուս կողմից, տարբեր մակարդակներում շարունակվում են խոսակցությունները Մատենադարանի առագա տնօրենի շուրջը, նկատի ունենալով, որ ներկայիս տնօրեն Սեն Արեւշատյանը շուտով անցնելու է թոշակի: Երեկ, հիմնվելով «Նոյյան տապան» գործակալության նախորդ օրվա լուսավորության վրա, գրել էինք, որ այդ պաշտոնի ամենահավանական թեկնածու է համարվում «Նաիրի» հրատարակչության տնօրեն Հրաչյա Թամրազյանը, որն ինչ-որ ժամանակ աշխատել է Մատենադարանում: Մինչդեռ երեկ տարբեր շրջանակներում առաջ էր քաշվում Մատենադարանի ավագ գիտաշխատող, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Վարդան Դեւրիկյանի անունը: Երեկ մի պահ անակնկալորեն շրջանառվեց նաեւ բոլորովին անսպասելի մեկ այլ անուն՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի: Հայտնի է, որ ՀՀ առաջին նախագահը երկար տարիներ որպես ավագ գիտաշխատող եւ քարտուղար աշխատել է Մատենադարանում եւ այժմ էլ շարունակում է իր պատմաբանասիրական աշխատանքները: Լ. Տեր-Պետրոսյանի թեկնածությունը պաշտոնողները շեշտում էին նաեւ նրա առավելություններից մեկը՝ նրա գլխավորությամբ կբարձրանա Մատենադարանի միջազգային հեղինակությունը, վարկը, կզարգանան միջազգային կապերը:

Կ. Զ.

ՅՈՒՇՈՒՄ

Հանձնախումբ՝ ի պատվո՝ Արթուր Պողոսյանի

Երեկ, ինչպես տեղեկացնում է «Ֆավախտ-Ինֆոն», Ֆավախտում ստեղծվել է «ի պատվո՝ Արթուր Պողոսյանի» հասարակական նախաձեռնությամբ հանձնախումբ: Հիշեցնենք, որ ապրիլի 24-ի երեկոյան Ախալքալաքի Ազատության պողոտայում շրջանային դատախազի վարորդը վրաերթի էր ենթարկել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի ոգեկոչման արարողությունից վերադարձող Ախալքալաքի շրջանային ժողովի Կոմունիստի համայնքից ընտրված պատգամավոր Անդրանիկ Աբելյանին: Մոտերում գտնված Արթուր Պողոսյանն ու Նաիրի Իրիցյանը փորձել են դադարեցնել վարորդի հարվածներն ուղղված Անդրանիկ Աբելյանին: Միջադեպից հետո՝ արդեն գիշերը վերջիններս ձերբակալվել են: Մի քանի ժամ անց Արթուր Պողոսյանին արդեն տեղափոխել էին Թբիլիսի՝ երկու ամսով երկարաձգելով ազատազրկման ժամկետը:

Ն. Պ.

Կենդանաբանական այգու սեզոնը բացվեց

1941 թվականից Հայաստանում գործում է կենդանաբանական այգին եւ ամեն տարի մայիսի 1-ին այգու սեզոնի բացումով կենդանաբերների հոսքը տարեցտարի շատանում է: Երեկ Երեւանի քաղաքապետարանի ղեկավարությունը այցելեց այգի, ծանոթացավ հաջողություններին ու պրոբլեմներին, մի պահ էլ «մանկացավ»: Այգու տնօրեն **Սահակ Աբովյանի** հետ զրույցից տեղեկացանք, որ խորհրդային տարիներին Երեւանի կենդանաբանական այգին լավագույնն է համարվել ԽՍՀՄ-ում: Սակայն 90-ական թվականներին այգին հայտնվում է ծանր պայմաններում եւ միջազգային կազմակերպությունները անգամ այգու լինել-չլինելու հարցը բարձրացրին:

Տես էջ 2

Մոսկվայում ծեծկռտուք հայերի եւ ազերիների միջեւ

«Էխո Մոսկվի» ռադիոկայանի մատուցմամբ, երեկ զանգվածային ծեծկռտուք է տեղի ունեցել հայերի եւ ադրբեջանցիների միջեւ Մոսկվայի Պատրիս Լումումբայի անվան Ժողովուրդների բարեկամության համալսարանում: Կողմերի միջեւ կռիվն սկսվել է համալսարանի ցուցատախտակում, որտեղ հայերն ու ազերիները «Հարավ-արեւմուտք» ծրագրի շրջանակներում ցուցադրում էին իրենց ազգային արժեքները: Ըստ ադրբեջանական կողմի պնդումների, ձեռնակռիվն սկսվել է այն պահին, երբ հայերը բարձրացրել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դրոշը: Ըստ ռուսական ռադիոկայանի, ազերիների շարքից կա 1 վիրավոր, որը տեղափոխվել է հիվանդանոց: Ոստիկանությունը ձերբակալել է մի քանի տասնյակ մարդու:

«Ես հույս ունեմ, որ մեր երեխաները չեն վախենա վաղվա լուսաբացի համար»

«Բարգավաճ Հայաստան»-ը հանդիպեց հրազդանցիներին եւ քանաքեռցիներին

Աշխատավորների համերաշխության միջազգային օրը՝ երեկ, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը (ԲՀԿ)՝ ղեկավար Գագիկ Ծառուկյանի գլխավորությամբ, հյուրընկալվեց Հրազդան քաղաքում: Քարոզարշավի շրջանակներում կազմակերպված հանդիպումը, որ համընկել էր տոն օրվա հետ, տոնական երանգներ ունեցավ: Նախ կուսակցությունը համերգ էր կազմակերպել հրազդանցիների համար, հետո էլ՝ Գագիկ Ծառուկյանից Հրազդանի ուսանողները երկու ավտոբուս նվեր ստացան: Հրազդանցիներն էլ Մարիամ Ասվածածնի պատկերով նկար նվիրեցին ԲՀԿ առաջնորդին՝ մաղթելով, որ Աստված միշտ օգնական լինի նրան:

Տես էջ 2

Ադրբեջանի երկրորդ վերջնագիրը Ռուսաստանին

Ռուսաստանյան «Տերա» հրատարակչությունը լույս է ընծայել մեծ հանրագիտարան, որում Լեռնային Ղարաբաղը ներկայացված է որպես անկախ հանրապետություն, ինչի կապակցությամբ Ադրբեջանն արդեն բողոքի երկրորդ վերջնագիրն է հղել Ռուսաստանին: «Դեյ.ազի» հաղորդմամբ, Ադրբեջանի արտգործնախարարի տեղակալ Արազ Ազիմովը վերջնագիրը երեկ փոխանցել է Ադրբեջանում Ռուսաստանի դեսպան Վասիլի Իսրատովին: Առաջին վերջնագիրն անպատասխան է մնացել:

Բելառուսն ու Ադրբեջանն բարեկամություն են անում

Եռօրյա այցով երեկվանից Ադրբեջանում է գտնվում Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն: Նախատեսված են մի շարք երկկողմ փաստաթղթերի ստորագրում եւ երկու երկրների նախագահների համատեղ մամուլի ասուլիս: Ստորագրվելիք փաստաթղթերի շարքում Ադրբեջանի եւ Բելառուսի համագործակցության մասին պայմանագիրն է, երկու երկրներից մեկում ժամանակավորապես աշխատող մյուս երկրի քաղաքացիներին աշխատանքային գործունեության եւ սոցիալական պաշտպանության մասին համաձայնագիրը: Բելառուսի նախագահի Ադրբեջան այցը կավարտվի վաղը՝ Բելառուսի ազգային ցուցահանդեսի բացմամբ:

Արամ Մանուկյան. «Հայաստանն այսօր խաղաքական ընտրություն չի անում»

Մայիսի 28-ին՝ շաբաթ օրը, ՀՀ խորհրդարանական ընտրություններին համամասնական կարգով մասնակցության բացարկ հայտարարած Հայոց համազգային շարժում կուսակցության վարչության երկու անդամներ՝ Հովհաննես Իգիթյանն ու Արամ Մանուկյանը շարունակում են մնալ ընտրայիսրում մեծամասնական ընտրակարգով: Այս փաստը երեկ «Փաստարկ» ակումբում **Արամ Մանուկյանը** բացատրեց՝ թիվ 4 ընտրատարածքում իր, թիվ 1-ում Իգիթյանի ներկայության շնորհիվ գործում է ընդդիմության միասնական թեկնածուի մոդել, քանի որ բոլոր իրական ընդդիմադիր ուժերը սատարում են իրենց: Թե ովքեր են ՀՀՇ գնահատականով իրական ընդդիմադիր ուժերը, անվանատես չբարձրաձայնեց Արամ Մանուկյանը եւ հայտարարեց. «Իրենց իշխանական հայտարարած կուսակցությունները 4-5-ն են, մնացյալը ընդդիմադիր դաշտում են, դրանց մեծ մասն էլ ընդդիմություն խաղացողներն են: Ինձանից լավ գիտեք ովքեր են»: ՄԱԿ կուսակցությունը, Տիգրան Կարապետիչը, Շավարշ Քոչարյանի (ԱԺԿ), Արամ Սարգսյանի (ՀՅԿ) կուսակցությունները, բանախոսի գնահատականով, նույն մասխարայության շրջանակում են, քանի որ հանգիստ տեղավորվում են մի «Ժիգուլու» մեջ, Արտաշես Գեղամյանն էլ ընդդիմություն չէ, այլ, բանախոսի խոսքով ասած, իշխանության հետ խաղեր տվող: Եվ այդ մասխարայությունը մեծ չափերով ժողովրդին մատուցելով էլ, ըստ ՀՀՇ վարչության անդամի, իշխանությունն արդեն վարկաբեկել է կուսակցություն գաղափարը եւ ստեղծել մի իրավիճակ, որում Հայաստանն այսօր քաղաքական ընտրություն չի անում: «Եվ հենց սա է իշխանության ամբողջ քաղաքականությունը, ու քանի որ 25 կուսակցությունից 20-ը ջուր

ՖՈՏՈԼՈՒՐ

ողտորելու, քաղաքական վարկաբեկման դաշտում են գտնվում, քաղաքական ուժն իջնում է արդեն Տիգրան Կարապետիչի մակարդակի», հայտարարեց Արամ Մանուկյանը: Չնայած դրան, նա հուսահատ չէ եւ ընդդիմության միավորումը հնարավոր է համարում անգամ քվեարկությունից հետո. «Գուցե 13-ը գործի: Կարծում եմ՝ իշխանությունը, կորցնելով իր խոհեմությունը, հերթական անգամ կոշտ քայլերի է գնալու: Համոզված եմ, որ կրիմինալ դաշտում իրենց ամբողջ ողջենցիալը դեռ չեն բացել: Սեփական մկանները ցուցադրելու գործընթացը դեռ ուժեղանալու է, եւ կարծում եմ, հենց իրենք էլ կստիպեն, կուղղորդեն ժողովրդին ավելի ակտիվ գործողություններ անելու, որովհետեւ այն, ինչ իրենք պետք է անեն, անհնար է, հավատացեք ինձ, 10 տոկոսից ավելի, բոլոր վարչական ռեսուրսներով, փողով, չգիտեմ ինչ շանտաժով, չեն կարողանալու տասը տոկոսից ավելի իրական ձայն տանել: Այս անգամ դժվար է լինելու»: Այս համոզմունքը հայտնած Արամ Մանուկյանը դեմ է որեւէ գույնի հեղափոխության, քանի որ դրանք լինում են նեռուծված եւ իշխանությանը դարձնում են արտերկրի պարտատան: «Սակայն իշխանությունն ինքն է այնպես անում, որ ամեն ինչ գնա հենց այդ ուղիով»: Իր ընտրազանգվածի լինելիությանը վստահ ՀՀՇ-ն որոշել է դեռեւս լռել նրան ուղղորդելու նպատակով որեւէ կուսակցության անուն տալու հարցում, քանի որ չի բացառում, որ կարող է ասել քաղաքական մի ուժի անուն, որը հետեւի ՀՀՇ օրինակին եւ հանուն ընդդիմության համախմբման ինքնաբացարկ հայտարարի: Կուսակցությունն առայժմ միայն ընդհանուր կոչ է անում. «Ընտրել այն կուսակցություններին, ում համար առաջնահերթություն են իշխանափոխությունը, ազատականությունը, ժողովրդավարությունն ու իրատեսական քաղաքականությունը»: Ամեն դեպքում մայիսի 12-ից մի քանի օր առաջ ՀՀՇ-ն կիրառարակի քաղաքական այն ուժի անունը, ում օգտին նաեւ կոչ կանի քվեարկել իր ընտրողին: Սակայն արդեն իսկ, Արամ Մանուկյանի տեղեկացմամբ, ՀՀՇ-ն միանալու է մայիսի 3-ին միասնական հանդիպմանով մեկնարկելիք «Նոր Ժամանակներ», «Հանրապետություն» կուսակցությունների եւ «Իմքիչմենս» դաշինքի ձեռնարկած գործընթացին. «Մենք մասնակցելու ենք այդ հանդիպմանին: Մենք իրենց համարում ենք իրական ընդդիմություն, մինչեւ վերջ պայքարող ընդդիմություն: Մենք մասնակցելու ենք 13-ին առաջարկվող, բոլոր սպասվելիք ֆորմատներին: Ով էլ մնա, նշանակ, գնե այսօր հրապարակում մնացող ընդդիմադիրներից, մենք նրան աջակցելու ենք», տեղեկացրեց ՀՀՇ վարչության անդամ Արամ Մանուկյանը, մոռանալով հենց իր առաջ իր դրած նախապայմանը ժողովրդավարական եւ ազատական լինելու «ցենզը»:

ՆԵՌԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Ես հույս ունեմ, որ մեր երեխաները չեն վախենա վաղվա լուսաբացի համար»

1-ին էջից

«Ես ուզում եմ, որ մեր դրությունը մի քիչ լավացնեն, որ մեր երեխեքը աշխատանք ունենան ու այ սենց պատերի տակը չկանգնեն: Թող մեր բանկի փողերը տան՝ 4000 մանեթ ունեմ, աշխատանք լինի, էդքան բան, ոչ մեկից չեմ բողոքում, թող բոլորն էլ ընտրվեն», մինչ կուսակցության ղեկավարության ժամանումը **«Ազգի»** հետ զրույցում ասաց հրազդանցի **Ռոզա Հայրապետյանը:** Մի պարիկ էլ՝ **Մանուկյան Հայկարամը** հավելեց. «Այս կուսակցությունից հույս ունեմ, որ մի քիչ մեր կյանքը կլավացնի: Ամբողջ ընտանիքով մեր ձայնը Ծառուկյանին ենք տալու»: Քաղաքապետարանի առջեւ հավաքված հրազդանցիները մեծ հույսեր են կապում ԲՀԿ-ի հետ եւ մեզ հետ զրույցում նշում էին իրենց սոցիալ-տնտեսական բոլոր խնդիրները, որոնց լուծումն ակնկալում են ԲՀԿ-ից: «Ես Բարգավաճ Հայաստանին եմ համակրում՝ երիտասարդական հայացքների, երիտասարդների թիկունքի համար: Ծառուկյանը իր վարքով, պահվածքով, վերաբերմունքով հաստատ կնպաստի մեր երեխաների լավ ապագայի համար եւ մեր երեխաները կմոռանան անցյալ 15 տարիների դժվարությունները ու չեն վախենա վաղվա լուսաբացի համար», ասաց **Ասյա Հարությունյանը:**

Տարեց մարդիկ հատկապես հավաքվել էին բեմի շուրջը՝ ձեռքերին իրենց նամակները, եւ համառորեն սպասում էին կուսակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանին, որի հետ խոսելու առիթ նրանց ընձեռվեց:

Հրազդանի գլխավոր մարզադպրոցի տնօրեն, Կոտայքի մարզում կուսակցությունից մեծամասնական ընտրակարգով առաջադրված **Մխիթար Հարությունյանը** հրազդանցիներին իրենց վստահության քվեն ԲՀԿ-ին տալու կոչ արեց. «Եկեք բարգավաճ Հայաստանում բարգավաճ Հրազդան կառուցենք»: «Մենք պատասխանատու ենք մեր ծրագրերի համար՝ սոցիալականից սկսած մինչեւ տնտեսական: Մենք ձգտում ենք արդարության վերականգնման եւ գործարարության վերացման», իր ելույթում նշեց ԲՀԿ անդամ **Օֆելյա Պետրոսյանը:** Կուսակցության մեկ այլ անդամ՝ **Արամ Սաֆարյանը** հրազդանցիներին հավաստիացրեց, որ ԲՀԿ-ն հեղափոխության կուսակցություն չէ եւ ժողովրդին չի կանչելու բարիկադներ: «Այդ ժամանակներն անցել են, հիմա բարեկեցության մրցություն է: Մենք ուզում ենք մասնակցել այս երկրի կառավարմանը մի պարզ պատճառով՝ մենք ունենք ծրագրեր»:

«Ես անկախության տարիներին այս երկրում կայացած մարդ եմ, այս երկրի հետ է կապված իմ երեխաների ապագան: Ես ձեր թիմից եմ, ձեզնից մեկն եմ լինելու», իր ելույթն այսպես սկսեց ԲՀԿ ղեկավար **Գագիկ Ծառուկյանը,** որի խոսքերը բուռն արձագանքի արժանացան: «Ես խոստումներ չեմ շռայլում, ես միայն ասում եմ, որ միասին ենք աշխատելու», ասաց կուսակցության նախագահը:

Հրազդանյան հանդիպման ավարտին շարունակվեց բնակիչների համար կազմակերպված համերգը, եւ մինչ հրազդանցիներն ուրախանում էին, կուսակցությունը վերադարձավ Երեւան եւ հանդիպեց Քանաքեռ-Զեյթուն համայնքի բնակիչների հետ:

Համայնքի այս հանդիպումն առանձնացավ նրանով, որ բնակիչներին հիմնականում ողջունեցին կուսակցության շարքերը համալրած քանաքեռցիները: Պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկան, քանաքեռցի **Արծրուն Ավագյանը,** որ լինելով համայնքի բնակիչ՝ լավ ծանոթ է համայնքի խնդիրներին՝ նշեց, որ կուսակցությունն ունի ծրագիր Քանաքեռի խնդիրների լուծման համար: Ագրարային համալսարանի (գյուղատնտեսական) ռեկտոր **Գագիկ Սանթրոսյանը** կոչ արեց մայիսի 12-ին ընտրել ԲՀԿ թեկնածու, մեծամասնական ընտրակարգով առաջադրված Ատոս Տոնոյանին: «Ես այս ժողովրդի առաջ հայտարարում եմ, որ գիտակցում եմ այս պատասխանատվությունը եւ հույս ունեմ, որ հաղթանակից հետո կշարունակենք միասին աշխատել», իր հերթին նշեց Քանաքեռ-Զեյթուն համայնքում ԲՀԿ-ից առաջադրված **Ատոս Տոնոյանը:**

Համայնքի հետ հանդիպումը ելույթով եզրափակեց Գագիկ Ծառուկյանը, որը համայնքին շատ օգնության մեկ մեքենա նվիրեց: Խոստանալով ժողովրդին հուսախաբ չանել՝ Գ. Ծառուկյանն իր խոսքում նշեց. «Ես երկնքից աստղեր չեմ իջեցնելու, ձեր եղածին ճիշտ ժամանակին, ճիշտ տեղում ուշադրություն եմ դարձնելու»: Համայնքի բնակիչների հետ հանդիպումից հետո այստեղ եւս շարունակվեց կուսակցության կազմակերպած համերգը:

Գ. Գ.

Հրազդան-Երեւան

ՏԵՍԱԿԵՏ

Գյուղին՝ պետական աջակցություն

*«Ազգի» ընթերցողներին ենք ներկայացնում Քրիստոնեա-դեմոկրատական միություն կուսակցության ղեկավար, թիվ 10 ընտրատարածքում ԱԺ պատգամավորության թեկնածու **Խոսրով Հարությունյանի** տեսակետը «Գյուղին՝ պետական աջակցություն» թեմայի մասին:*

Գյուղացիական տնտեսությունների հիմնական պրոբլեմը ոչ միայն մթերքի շահեկան իրացումն է, այլեւ աշխատանքի ցածր արտադողականության, ձեռքի աշխատանքի գերակշռման ու մեխանիզացման ցածր մակարդակի պատճառով գյուղմթերքների ինքնարժեքի չափից բարձր լինելը: Գյուղում կյանքը աշխուժացնելու, գյուղացու աշխատանքը արդյունավետ եւ արդարացված դարձնելու համար գյուղատնտեսությունը պրիմիտիվ մենատնտեսների գործունեության ոլորտից պետք է վերածի բարձր արտադողական արդյունաբերական ոլորտի: Անհրաժեշտ է խթանել հողատորների եւ տնտեսությունների խոշորացումը՝ տնտեսական գործունեությունն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով, ընդ որում յուրաքանչյուր գյուղացի պետք է հնարավորություն ունենա պահպանելու իր սեփականատիրական իրավունքները: Պետք է կիրառել մասնավոր ներդրումների խթանման բյուջետային եւ հարկային գործիքներ, պետության ուղղակի մասնակցությամբ (վարկային երաշխիքների տրամադրում, սուբսիդավորում) յուրաքանչյուր մարզում կազմակերպել գյուղատնտեսական մեքենաների եւ սպասարկումների կենտրոններ (4-5 գյուղի համար մեկ կենտրոն) այսօր դեռ գոյություն ունեցող կառույցների բազայի վրա, խթանել ժամանակակից ոռոգման համակարգերի՝ մասնավորապես կաթիլային ոռոգման համակարգի ներդրումը գյուղատնտեսության մեջ:

ՀԶԴՄ նախագահ, թիվ 10 ընտրատարածքում պատգամավորության թեկնածու Խոսրով Հարությունյանի նախընտրական ծրագրի մանրամասները՝ ՀԶԴՄ կայքէջում՝ www.acdu.am:

Մ. Մ.

Կենդանաբանական այգու սեզոնը բացվեց

1-ին էջից

Շնորհիվ Երեւանի քաղաքապետարանի եւ կառավարության, այգուն հատկացվեցին գումարներ ու միջոցներ եւ այն ազատ գործում է: Այսօր այգու «բնակիչների» թիվը հասել է 2300-ի, մոտ 180 տեսակից եւ նրանց սնունդի հարցը տրամադրված է պետբյուջեից՝ 207 մլն դրամ 2007 թվի համար: Ուրախալի է, որ այգու երկարամյա «բնակիչ» գորշ արջը այս տարի երկու ձագ է ունեցել: Բազմացել են նաեւ վայրի ոչխարները (մուֆլոն), այծերը, ջրլող թռչունները, կարապները: 24 հեկտար տարածքում փռված կենդանաբանական այգին անցած տարի ընդունել է 130.000 այցելու: Ջնեռային շրջանում այգու անասնաբույժները եւ մասնագետները հոգացել են լրացուցիչ ջերմության, խնամքի ու սննդի մասին, ոչ մի կենդանի չի հիվանդացել: Այսօր այգու կենդանիների մեկ օրվա չափաբաժնի համար ծախսվում է 200 կգ խտացրած կեր, 150-160 կգ միս, 600 կգ խոտ եւ մի քանի հարյուր կգ միրգ ու բանջարեղեն:

Երեկ մարդաշատ այգին վաղ առավոտից եռուզեռի մեջ էր: Ամենուր երգ-երաժշտություն, կարուսելներ, ճոճանակներ, հազար ու մի մանկական զբաղմունքի վայրեր, վաճառվող խաղալիքներ, շիխկաբաբներ, սնունդ, որը պարզ չէ՝ սանիտարական նորմաներին որքանով է համապատասխանում...

Այգու փորիկ այցելու հոգնած 4-ամյա հայկը լալիս էր ու կարուսելից չէր իջնում, իսկ մայրիկը նրան համոզում էր, որ կենդանիներին տեսնելու են եկել: Սակայն հայկի պես շատերը այգու մուտքից մինչեւ կենտրոն այնքան էին խաղացել ու զվարճացել, որ միայն մի քանի կենդանիների՝ արջերին, սիրամարգին, թռչուններին տեսնելուց հետո կամ քնում էին, կամ էլ լալիս ու տուն ուզում: Մի՞թե չի կարելի այդ ամեն զվարճանքները այգու տարածքից հանել, որպեսզի երեխաները կենդանիների հետ մի քանի ժամ շփվեն ու նրանց հոգում սերն ու բարությունը շատանան, այլ ոչ թե տարվեն խաղերով, որոնք ծնողների գրպանից 3-5 հազար դրամ են խլում ու երեխան էլ բավարար չի ընկալում կենդանական աշխարհի կարեւորությունը:

ՄԱՐԻՆԵ ՄԱՐՏԱՐՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԵ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221

Լուրերի սենյակ / հեռ. 581841

Համակարգչ. ծառայություն / հեռ. 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայություն / հեռ. 529353

Համակարգչային շարվածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՅ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի

Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Թող ոչ մի «զոհ» չդահանջվի ՀՀԾ-ից բացի

Մյուս ընդդիմադիրները շարունակում են ընտրապայքարը

Մինչեւ մայիսի 12-ը մնացել է 2 շաբաթից էլ պակաս, եւ խորհրդարանական ճակատամարտի ելած կուսակցությունները շարունակում են ընտրարշավը՝ մարզերում, հեռուստաալիքներով, բրոշյուրներ բաժանելով, մամուլի ասուլիսներ ու ֆնարկումներ հրավիրելով: Մի խոսքով, քաղաքական ներկայությունը լիովին ազատվել է տարեսկզբի երկչոտությունից ու գովազդը հողարկելու փորձերից եւ անցել բացահայտ ինքնագովազդի, հաճախ՝ հակառակորդի վարկաբեկումների հաշվին:

Նախորդ օրը Հայոց համազգային շարժումը ընտրությունների համարյա շեմին ընդդիմադիրներին համաձայնեցրեց ՀՀԾ-ին, որովհետեւ նրա առաջարկը ոչ միայն ժամանակավրեպ է համարում, այլեւ գտնում է, որ ինքը բավարար զոհողություն արդեն արել է:

Եվ բացի այդ, առաջարկաշաբաթ այս ժամանակաշրջանի համար հատկանշական մի երանգ էլ է նշմարվում՝ դրանց բոլորի հետեւում շանտաժի սպառնալիք է երեւում, այսինքն, եթե իրենց առաջարկին չհամաձայնվեն, կվարկաբեկեն մամուլով եւ ընդհանրապես: «Չեմ ընդունում այն տոնը, այն ոճը, ինչով արվում են այդ առաջարկները: Դրանց ենթատեքստում կան շանտաժի նոտաներ», ասաց ՀԺԿ քաղխորհրդի անդամը:

ԱԺԿ-ի համար խորհրդարան գնալը, Հրանուշ Խառատյանի բնորոշմամբ, գերխնդիր չէ, գլխավորը ժողովրդից խլված իշխանությունը նրան վերադարձնելն է: Այսինքն, նրա սահմանադրական իրավունքի վերականգնումը:

Հաջորդ խնդիրը խորհրդարանից պատգամավորի հեռկանչի մեխանիզմի ստեղծումն է: Շատ պատգամավորներ, խորհրդարան մտնելով, հաճախ փոխում են իրենց ծրագրերն ու դիրքորոշումները՝ հայտնվելով այլ խմբերի ու կուսակցությունների մեջ: Բայց ժողովուրդը, նրանց ընտրողները ձայն են տվել այլ ծրագրերի համար: Ստացվում է, որ ընտրողին արհամարհելով, ամեն ինչ կարող ես անել, կարեւորը խորհրդարանում հայտնվելն է:

Ազգագրագետը կարծում է, որ հեռկանչի մեխանիզմը նաեւ զտաբատիկ կդառնա պատգամավորների համար, եւ նրանք իրենց գործողություններում ավելի շրջահայաց կլինեն:

Ինչպես մնացած բոլոր կուսակցությունները, ՀԺԿ-ն էլ հայտարարում է, որ 5 տոկոսի սահմանից ավելին է հաղթահարելու, բայց, բնականաբար, իրեն շատ ավելի արժանավոր է համարում մյուսներից: «Մենք հիմքեր ունենք այդպես ասելու», ասում է Ռուզան Խաչատրյանը: Եվ այդ հիմքերից մեկը, երեւի պիտի համարել բազմաթիվ խնդիրների լուծումը բարոյական ասպարեզում: Հիմա իրենց նույնչափ ջերմ են ընդունում, ինչ նախորդ ընտրությունների ժամանակ (քաղաքից այցելությունների կարոտ մեր ժողովուրդն, ի դեպ, բոլորին էլ հավասար ջերմությամբ է ընդունում): Ավելին, հիմա պատասխանատվություն են հայտնում իրենց կողքին կանգնել՝ ձայները պաշտպանելու համար: ՀԺԿ-ի կողմն ուղղված մեղադրանքներին ի պատասխան, թե չնպաստեցին, որ ընդդիմադիր միասնական միավոր ստեղծվի, արդարացում գտել են՝ որպես ասելիք ունենք այդպես ասելու: Ինչպես ասում է Ռուզան Խաչատրյանը, ամեն դեպքում,

ԱՐԴՅՈՒՆԱՐԱԾ

Իտալահայ համայնքի մեծագույն մտատանջությունը հայ մնալն է

Իտալիայում 2000 հայ է ապրում: Նրանցից 300-ը Միլանի բնակիչներ են: Համեռաբխ են ու խմբված հայ մնալու գաղափարի շուրջը: Դա էլ միայն գաղափար չէ, այլ փաստացի գործելու դաշտ: Այս հավաստումը միլանաբնակ **Կեկել Խաչատրյանինն** է. «Մեր համայնքը, փոքր լինելու շնորհիվ, ոչ մի կուսակցական խնդիր չունի: Կան բոլոր կազմակերպություններին գաղափարապես հարող անձինք, եւ դա չի խանգարում միասեղ գործելուն: Մեր մեծագույն մտատանջությունը հայ մնալն է, մնացյալը երկրորդական, երրորդական խնդիր է: Ամեն մարդ իր քաղաքական համոզմունքը իրեն պիտի պահի»: Երեւանի ճարտարագիտական (պոլիտեխնիկական) համալսարանում քիմիկոսի մասնագիտությամբ կրթություն ստացած տիկին Խաչատրյանի գործունեությունն էլ ապացույց է ասվածի: Նա աշխատում է Միլանում գործող փաստորեն բոլոր հայկական կազմակերպություններում՝ «Իտալիայի հայոց միության» եւ ՀԲԸՄ Միլանի մասնաճյուղի ատենադպրուհին է, Հայ առաքելական եկեղեցու հոգաբարձուների տիկնանց հանձնախմբի ներկայացուցիչը, աշխատում է նաեւ Հայոց տանը:

Թվարկվածները բոլոր այն հայկական կազմակերպություններն են, որոնք գործում են Միլանում, որի փոքրաթիվ հայկական համայնքն ամենայնս ինտեգրված է երկրի կյանքին եւ հատուկ խնդիրներ չունի, սակայն պետական մակարդակում ներկայացվածություն էլ չունի: Վերջինը, Կեկել Խաչատրյանի կարծիքով, հայ համայնքի ձգտման բացակայության կամ պակասի պատճառով է: Համայնքի փոքրաթիվ լինելը համեռաբխությունից զատ սրում է նաեւ հայապահպանման խնդիրը, քանի որ երեխաների եւ երիտասարդների փոքր լինելու պատճառով հայկական դպրոց չի գործում Միլանում:

Հայ առաքելական եկեղեցու աջակցությամբ Հայոց տանը շաբաթ օրերին տրվող հայերենի դասընթացները եւ մասնավոր ուսուցումը, բնականաբար, չեն կարող փոխարինել դպրոցին: Իսկ հայերենի դասընթացներին մասնակից շատ իտալացիներ էլ կան՝ Կեկել Խաչատրյանի վստահեցմամբ: Նաեւ առավել մեծ է հայերենին տիրապետելու ցանկությունը իտալաբնակ հայության երրորդ սերնդի կողմից: Զուցակցիս դիտարկմամբ, նրանց պապերը, որ ցեղասպանությունը վերապրողների առաջին սերունդն էին, հիմնականում իտալուհիների հետ էին ընտանիք կազմել եւ ժամանակի ընթացքում կորցրել հայերենի իմացությունը սերունդներին փոխանցելու կարեւորության զգացումը նաեւ սոցիալական խնդիրների պատճառով: Այսօր արդեն կյանքը կարգավորելով՝ նրանք էլ հնարավորություն են ընձեռում իրենց զավակներին հայերենին տիրապետելու, չնայած իրենք մայրենին չգիտեն:

«Վերջին 15 տարիներին՝ հայրենիքի անկախացումից ի վեր հայկականության հանդեպ գործում հետաքրքրությունը, հայրենասիրությունը ավելի զորացան իտալահայության մեջ եւ խառն ամուսնություններից ծնված երիտասարդներն իրենք էլ կարեւորեցին հայերեն սովորելը», փաստեց Կեկել Խաչատրյանը: Իսկ խառն ամուսնությունները վերապրողների առաջին սերնդով չեն սահմանափակվել եւ դրանք Իտալիայի հայ համայնքում իրողություն են նաեւ այսօր: Զուցակիցս ընդգծեց. «Քրիստոնյա երկիր է, հետեւաբար պատնեշ չկա հասարակության միջեւ, մեծ սրությամբ չի դրվում ինքնության պահպանության հարցը եւ մեծ է խառը ամուսնությունների թիվը: Թերեւս տասից մեկն է ոչ խառն ամուսնական զույգ»:

Այս ամենով հանդերձ, Իտալիայի հայ համայնքը միահամուռ է: Միլանաբնակ 300 հայերի կեսից էլ փիչն է համայնքի կյանքի հանդեպ ակտիվ հետաքրքրություն դրսեւորում, սակայն մշտապես պատրաստակամ են բոլորը մեծ խնդիրների լուծման համար: Դեռ 1965 թվականի ազգային զարթոնքի ժամանակ միլանաբնակ հայությունը կարողացավ Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակումն իրականացնել Միլանի գլխավոր տաճարում հայ կաթողիկե ծիսակարգով պատարագ մատուցելով: Եվ եթե այն տարիներին կար կարդինալ Աղաջանյանի աջակցությունն, ապա մեծ ոճիրից 90 տարի անց Միլանի հայությունը կարողացել է քաղաքի պատմական Սանտ Ամբրոջիոյի եկեղեցում հայոց առաքելական եկեղեցու ծիսակարգով պատարագ մատուցել: Այդտեղ համայնքը ավանդույթ է դարձրել ապրիլի 24-ին այդ եկեղեցում պատարագ մատուցելը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին ու հոգու հանգստության համար: Այս տարի պատարագին մասնակցել են բոլոր քույր եկեղեցիների ներկայացուցիչները եւ իրենց ելույթներում դատապարտել Թուրքիայում իրականացված հայերի ցեղասպանությունը: «Նույնիսկ հայ համայնքի տարեցները, որ ներկա էին եղել 50-ամյակի դեմքերին, մինչեւ վերջին վայրկյանը չէին հավատում, որ 90-ամյակի պատարագը Սանտ Ամբրոջիոյի եկեղեցում կտրվի: Հարցնում էին՝ ստացվե՞լ է, վստա՞հ եք, որ մեր առաքելական ծեսը կդառնա: Հայերենով կարող էր լինել, բայց ոչ առաքելական: Բայց միացյալ ջանքերով հաջողեցինք: Մենք շատ փոքր համայնք ենք եւ սա մեծ հաղթություն է մեզ համար», վստահեցրեց Կեկել Խաչատրյանը:

Միլանի հայության հաղթություն է նաեւ տեղի հայկական եկեղեցու առկայությունը, որի կառուցման համար համայնքի ձեւավորման առաջին տարիներին Դիարբեքիրյան ընտանիքը կարողացել է տարածք ստանալ, հիմնարկեքի քարը տեղադրել, սակայն տարիներ շարունակ կառուցման թույլտվությունը չտրվեց՝ կաթոլիկ եկեղեցին դեմ էր 4-րդ դարի Սանտ Ամբրոջիոյի եկեղեցու կողքին՝ 200 մ հեռավորության վրա այն ժամանակ չճանաչված հայոց առաքելական եկեղեցու կառուցմանը: Ի վերջո նոր տարածքում կառուցվել եւ 1958 թվականից գործում է Միլանի հայկական եկեղեցին:

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ինչ ջուր են խմում ֆրանսիացիները, որտեղի՞ց եւ ինչպե՞ս են ստանում, որքա՞ն վճարում դրա համար

2005 թ.-ին «Երեւանի ջրմուղ-կոյուղու» 10 տարի ժամկետով կառավարման մրցույթը շահեց ֆրանսիական խոշորագույն «Վեոլիա» ընկերությունը, որն այն ժամանակ մեզ առավել հայտնի էր «Ժեներալ դեզ Օ» անվանումով: Ինչը նշանակում է ջրերի գլխավոր ընկերություն: Սակայն ընկերության անվանափոխումը ձեւական նշանակություն չուներ, քանի որ բացի ջրամատակարարման եւ ջրահեռացման ծառայություններից, ընկերությունը գործունեություն է ծավալում եւս երեք բնագավառներում՝ աղբահանություն եւ մաքրում, ջերմամատակարարում, ուղեւորների եւ բեռների փոխադրում: Ընկերությունը ջրամատակարարման ոլորտում ավելի քան 150 տարվա փորձ ունի, ստեղծվել է 1853 թ.-ին եւ իր առաջին պայմանագիրը կնքել Լիոն քաղաքում:

Այս ամենի մասին «Վեոլիայի» հրավերով Հայաստանից Ֆրանսիա մեկնած ջրամատակարարման ոլորտի պատասխանատուներից, մասնագետներից, ինչպես նաեւ լրագրողներից եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված պատվիրակության անդամներն իմացան ընկերության Հարավ-արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի գծով տնօրեն **Ժան-Պատրիս Պուարիեից:**

Պատկերացում կազմելու համար «Վեոլիայի» գործունեության շրջանակների մասին, նշենք, որ գործում է ոչ միայն ամբողջ Ֆրանսիայի տարածքում, այդ թվում գլխավոր՝ Փարիզ, Մարսել, Լիոն քաղաքներում, այլեւ աշխարհի ավելի քան 60 երկրներում: Մասնավորապես «Վեոլիան» է իրականացնում ջրամատակարարման եւ ջրահեռացման աշխատանքներն այնպիսի խոշոր քաղաքներում, ինչպիսիք են Պրահան, Բեռլինը, Բուխարեստը եւ արդեն նաեւ Երեւանը:

Ֆրանսիայում բնակչության 75 տոկոսի ջրամատակարարումն իրականացնում են մասնավոր օպերատորները: Երկրում այդ ուղղության առաջատարը «Վեոլիան» է, որը նաեւ աշխարհի առաջատար ընկերություններից է: Ջրամատակարարման ոլորտի երկրորդ ընկերությունը «Սուեզն» է, իսկ երրորդը՝ «Սորը»: Վերջինս նույնպես հայտնի է Հայաստանում: «Սորը» շահել է «Հայջրմուղկոյուղու» կառավարման մրցույթը:

Իսկ թե ինչպե՞ս է ֆրանսիական ընկերությունն իրականացնում ջրամատակարարումը իր հայրենիքում եւ ինչպե՞ս է աշխատում այդ համակարգը, ծանոթացանք Փարիզի ջրամաքրման եւ ջրամատակարարման երեք խոշոր կայաններից մեկում՝ «Մերի սուր ռազում»: Ֆրանսիայի մայրաքաղաքի, ինչպես եւ ամբողջ երկրի բնակչության գերակշիռ մասը՝ շուրջ 80 տոկոսը որպես խմելու՝ ջուր օգտագործում է մշակման անցած ծորակից եկող ջուրը: Լեռնային աղբյուրներից ջուր ստացող Երեւանի բնակիչների համար կարող է անսովոր թվալ դա, բայց իրականում մինչ սպառողին հասնելն այդ ջուրն անցնում է մաքրման եւ ֆիլտրացիայի բազմաբեռ համակարգի միջոցով: Ստացվող ջրի 1 խմ-ի գինը կազմում է բավականին բարձր գումար՝ միջինը 3-3,5 եվրո: Այդ սակագնի մեջ մեծ բաժին է կազմում նաեւ ջրահեռացումը՝ 32 տոկոսը:

Ֆրանսիայում խմելու ջրի սակագները տարբեր են ըստ տարածքների: Ի տարբերություն էլեկտրաէներգիայի եւ ջերմամատակարարման, որոնք ունեն միասնական ազգային սակագներ, ջրինն այդպես չէ: Կախված ջրի որակից, հումքից, տեղական պայմաններից եւ այլ հանգամանքներից, տեղերում դրանք կարող են տարբեր լինել՝ նվազագույնը 1,5 եվրոյից մինչեւ առավելագույնը 4 եվրո: Ըստ Ժան-Պատրիս Պուարիեի, ֆրանսիական 4 հոգուց բաղկացած միջին ընտանիքի բյուջեից 0,8 տոկոսն է վճարվում ջրի համար:

Եթե Փարիզում խմելու ջուրը հիմնականում ստացվում է գետերից, ապա Լիոնում, որտեղ ավելի քան 150 տարի առաջ իր գործունեությունն է սկսել «Վեոլիան», առավելապես օգտագործվում են ստորգետնյա ջրերը: Ընկերության Կենտրոն-Արեւելք շրջանի տնօրեն Ժերար Բուրդոնեից հետաքրքրվեցինք, թե ինչո՞ւմ են ջրի համար չվճարման դեպքեր եւ այդ դեպքում ինչպե՞ս է վարվում ընկերությունը: Նա հայտնեց, որ չվճարման դեպքերը փոքր են՝ 1,5-2,5 տոկոս: Նման դեպքերում հիշեցումներից եւ զգուշացումներից հետո ջրամատակարարումն անջատվում է: Սակայն ոչ թե ջուրն ամբողջությամբ է անջատվում, այլ խողովակի մեջ տեղադրվում է սարք, որը նվազեցնում է ջրի հոսքը, ապահովելու տվյալ բնակարանում նվազագույն սանիտարական կարիքները:

Բաժանորդների սպասարկման առումով ֆրանսիացիները հասել են նախանձելի մակարդակի, որին ականատես եղանք Լիոնում: Բաժանորդների բողոքներն անմիջականորեն երեւում են էլեկտրոնային վահանակի վրա: Այստեղ երեւում է, թե տվյալ պահին քանի հեռախոսազանգ է ստացվել, քանի ազատ աշխատակիցներ կան, որոնք պատրաստ են պատասխանելու այդ հեռախոսազանգերին, քանի ահազանգի են արձագանքել: Բացի այդ, ընկերության տվյալ բաժանմունքի համակարգչային ցանցում գրանցված են բոլոր բաժանորդների տվյալները, երեւում են նրանց ջրաչափերի ցուցմունքները: Այս ամենին ականատես լինելուց հետո, «Վեոլիայի» Հարավարեւելյան եւ Կենտրոնական Ասիայի գծով տնօրեն Ժան Պատրիս Պուարիեին հարցրեցինք, թե արդյոք կարելի՞ է հուսալ, որ Երեւանի ջրամատակարարման համակարգում, 10 տարի հետո, երբ կավարտվի ֆրանսիական ընկերության պայմանագրային կառավարման շրջանը, կհասնենք նույն մակարդակին: «Կհասնենք դրա մի մասին», ասաց նա:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Փարիզ-Լիոն-Երեւան

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Երկու հայ հարյուրի մեջ

Ռուսաստանի մեծահարուստների հարյուրյակի վերաբերյալ ամերիկյան «Ֆորբս» ամսագրի ռուսաստանյան տարբերակում հրապարակվող ամենամյա ցուցակները հետաքրքրական են գումարների դինամիկայի, բիզնեսի տեսակների, հատկապես առաջատարների դիրքերի փոփոխությունների, նրանց ազգային պատկանելության առումով եւ այլն:

Ներկա գարնանային ցուցակի անդամների ընդհանուր կարողությունը աճել է մեկ երրորդով եւ հասնում է ավելի քան 337 միլիարդ դոլարի: Ամենահարուստն ունի 19,200 միլիոն, «ամենաաղքատը»՝ 660 միլիոն դոլար: Արդեն ավանդաբար ամենահզորը հրեաներն են: Ռուսաստանցիներն աշխարհում ԱՄՆ-ից ու Գերմանիայից հետո գրավում են երրորդ տեղը:

Ցուցակի վերաբերյալ մեկնաբանություններում ուշագրավ է մի հանգամանք. 2004 թվականին նավթին ու գազին առնչություն ունեին 41 միլիոնատերեր, այսօր նրանց թիվը 18 է: Բանն այն է, որ Պուտինը հետեւողականորեն ուժեղացնում է պետության դերը հատկապես բնական պաշարների շահագործման բնագավառում: Ըստ ամսագրի, Ռուսաստանում նավթագազային անկախ ընկերություններ գրեթե չեն մնացել: Սա չի նշանակում, թե դյուրահաս կապիտալի նորաթուխ գիշատիչները մի կողմ են քաշվել նրանցից: Պարզապես ամեն մեկը չէ, որ կարողանում է գործել խելքով ու զգուշորեն՝ չհարուցելու իշխանության դժգոհությունն ու, առավել եւս, զայրույթը: Ըստ երեւույթին Պուտինին հաջողվում է կառուցել ռուզվելտյան պետական կապիտալիզմ, որն իրեն արդարացնում է ճգնաժամային իրավիճակներից դուրս գալու մարառումներում:

Ցուցակում կա երկու հայ բիզնեսմեն: 51-րդ տեղում է 35-ամյա **Դանիել Խաչատուրովը,** որը ղեկավարում է խոշորագույն «Ռոսգոսստրախ» ապահովագրական ընկերությունը: Ծնունդով Թբիլիսիից է, ամուսնացած է, ունի 2 երեխա: Ինձ հայտնի չէ, թե ինչքանով է գործում հոգուս հայության:

62-րդ տեղում է «Տրոյկա դիալոգ» ինվեստիցիոն խմբի տիրակալ **Ռուբեն Վարդանյանը**՝ 980 միլիոն դոլար (բուն ընկերությունը գնահատվում է 2,5-3 միլիարդ): Հետաքրքրական է, որ 2002-2004 թվականներին վերոհիշյալ «Ռոսգոսստրախը» գլխավորել է հենց Վարդանյանը: Ամուսնացած է, ունի երկու երեխա:

Ի տարբերություն Խաչատուրովի, Ռուբեն Վարդանյանը քաջ հայտնի է Եւ ռուսահայության շրջանում, Եւ Հայաստանում: Նրա անունը լսելիս անգամ հայ եկեղեցու Ռուսաստանի թեմի առաջնորդ Եզրաս սրբազան Ներսիսյանի դեմքը պայծառանում է, որովհետեւ մեծ է բիզնեսմենի կոնկրետ օգնությունը Մոսկվայի հայկական եկեղեցական հսկա համալիրի շինարարության գործում: Ընդսմին, սա ազնիվ հայորդու ազգային գործունեության սոսկ մի մասն է:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

Հ. Գ. Մոսկովյան թերթերից մեկը տարօրինակ էր համարել այն փաստը, որ տիեզերական զբոսաշրջիկ դառնալու՝ աշխարհի տարբեր երկրների մեծահարուստների ձգտումների ֆոնի վրա ոչ մի ռուսաստանցի հատուկ ցանկություն չի հայտնում մոլորակով հիանալու ռոմանտիկ հեռուներից: Ըստ երեւույթին տարբեր է արեւմտյան երկրների ու Ռուսաստանի բնակիչների հարստության կուլտուրան, գրում է թերթը: Առաջիններն իրենց կարողությունները ստեղծել են գործունեության բարձր ինտելեկտուալ ոլորտներում, ասենք, բիզնեսի վարման բարձրտեխնոլոգիական մեթոդների մշակումներ, լրատվական, էլեկտրոնային, հեռուստահաղորդակցման, հիշատակային տեխնոլոգիաներ եւ այլն: Պատահական չէ, որ հերթի է կանգնել նույնիսկ մոլորակի ամենահարուստ մարդը՝ «Մայքրոսոֆթի» ղեկավար Բիլլ Գեյթսը:

Իսկ Ռուսաստանում չնչին բացառությամբ հարստություն կուտակում են օգտակար հանածոների արդյունահանման եւ վերամշակման բնագավառում կամ, ասենք, շինարարության մեջ: Նման բիզնեսն արագ շահույթ է բերում, սակայն չի ընդարձակում մարդկային գիտելիքների հորիզոնները: Եվ հետո, հատուկ ընդգծում է թերթը, Ռուսաստանում շատերը հարստացել են ապօրինի միջոցներով եւ պարզապես վախենում են հրապարակ հանել իրենց փողերը:

Սահմանադրական դատարանը անվավեր հռչակեց Թուրքիայում նախագահական ընտրությունների առաջին փուլը

Ապրիլի 27-ին Թուրքիայի ազգային մեծ ժողովում՝ Մեջլիսում նշանակված էր նախագահական ընտրությունների առաջին փուլը: Ընդդիմադիր կուսակցությունների բոյկոտի պատճառով ընտրություններին մասնակցել էր 361 պատգամավոր: Թեեւ մասնակիցներից 357-ը կողմ էր քվեարկել Աբդուլլահ Գյուլին, սակայն դա ընդամենը առիթ էր տվել ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցությանը դիմելու Սահմանադրական դատարան, որպեսզի անվավեր ճանաչի առաջին փուլի քվեարկությունը:

Այս կուսակցությունը պնդում է, որ քվեարկությունը օրինական ճանաչելու համար անհրաժեշտ է դրան 367 պատգամավորի մասնակցությունը: Իսկ երկրում իշխող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը մասնակցության այս ցուցանիշը, որը 550 տեղանոց Մեջլիսում համազոր է ձայների բացարձակ մեծամասնությանը, համարում է առաջին եւ երկրորդ փուլում նախագահ ընտրվելու նախապայմանը: Ավելին, կուսակցությունն ընդգծում է, որ քվեարկության պահին Մեջլիսում ներկա են գտնվել 368 պատգամավորներ: Քանի որ այս պատգամավորների ներկայությունը գրանցվել է ցուցանակներում, ուստի Սահմանադրական դատարանը Ժողովրդա-հանրապետական կուսակցության պահանջը քննարկելիս պետք է քննարկի նաեւ 368 պատգամավորի ներկայության հարցը:

Երեկ ուշ երեկոյան Սահմանադրական դատարանը որոշեց անվավեր ճանաչել առաջին փուլը, գտնելով, որ դրան չի մասնակցել պահանջված նվազագույն՝ 367 պատգամավոր: Ավելի ուշ մամուլին տված ասուլիսում Աբդուլլահ Գյուլը հայտարարեց, որ այսօր տեղի է ունենալու նախագահական ընտրության 2-րդ փուլը, որտեղ հույս ունի ապահովել մասնակիցների նվազագույն թիվը՝ 367 պատգամավորի ներկայությունը:

Եթե Սահմանադրական դատարանը անհրաժեշտ համարի անվավեր ճանաչել նախագահական ընտրությունների նաեւ 2-րդ, ավելի շուտ՝ առաջին փուլի արդյունքները, ապա Թուրքիայում կնշանակվեն Մեջլիսի վաղաժամկետ ընտրություններ, որոնց անցկացումից հետո միայն կորոշվի երկրի նախագահի ընտրության հարցը: Իսկ եթե դատարանը օրինական ճանաչի այսօրվա քվեարկությունը, այդ դեպքում Գյուլին նախագահ ընտրելու համար «Արդարություն եւ Բարգավաճում» կուսակցությանը անհրաժեշտ է 367 ձայնի ապահովումը, այլապես երկրորդ փուլից հետո վերջինը սահմանված է լինելու կանգնել Մեջլիսի վաղաժամկետ ընտրություններ նշանակելու փաստի առջեւ, որովհետեւ քվեարկությունն ակամա վերադառնալու է ելման վիճարկելի կետին:

Սահմանադրական դատարանի որոշմանը նախորդել էր Թուրքիայի աշխարհիկ եւ հանրապետական կարգերին տեր կանգնելու կարգախոսով ապրիլի 29-ին Ստամբուլում հրավիրված միլիոնանոց հանրահավաքը, իսկ հանրահավաքին թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբի հայտարարությունը, որը բանակի պաշտոնական կայքէջում էր տեղադրվել ապրիլի 27-ի լույս գիշերը: Որքան էլ Ստամբուլի հանրահավաքը ուղղված լիներ վարչապետ Էրդողանի իսլամամետ «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության իշխանությունների դեմ, այնուամենայնիվ, մասնակիցները, ինչպես եւ Անկարայի հանրահավաքում, հարկ էին համարել ընդգծելու, որ մերժում են ռազմական հեղաշրջման ամեն մի դրսեւորում երկրում:

Ինչ վերաբերում է գլխավոր շտաբի հայտարարությանը, դա եթե ոչ ռազմական հեղաշրջման, ապա իշխանություններին բանակի կողմից միջամտության փորձ է համարվում ինչպես Թուրքիայում, այնպես էլ արեւմուտքում, եւ ոչ մի կերպ չեն դադարում դրա արձագանքները: Միջամտության փորձի համար թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբին Եվրոխորհրդի գլխավոր քարտուղար Թերի Դեւիսի հետ խստագույնս դատապարտել են Եվրահանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բարոզուն, Եվրամիության ընդլայնման գծով Եվրահանձնաժողովի հանձնակատար Օլի Ռենը, համարելով բանակի հայտարարությունը սարսափելի եւ ապշեցուցիչ, Եվրոխորհրդարանը, ինչպես նաեւ ԱՄՆ պետքարտուղարությունն ու ի դեմս Ռիչարդ Հոլբրուքի դեմոկրատական թեւի հզոր ներկայացուցիչները: Նրանք ընդգծել են ռազմական հեղաշրջման անհամատեղելիությունը ժողովրդավարացման գործընթացի հետ:

Այդ ընթացքում Մարդու իրավունքների միության Ստամբուլի մասնաճյուղի գլխավորությամբ Թուրքիայում գործող հասարակական-քաղաքական կազմակերպությունները, որոնց թվում է քրդամետ Ժողովրդահասարակարգ կուսակցությունը, զինված ուժերի գլխավոր շտաբի պետին եւ բոլոր չորս զորահրամանատարներին պաշտոնից ազատելու պահանջով դիմել են վարչապետ Էրդողանին, ինչպես նաեւ պաշտպանության նախարար Վեջդի Գյոնուլին: Հիշեցման կարգով նշենք, որ թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբը երկրի գործող Սահմանադրության համաձայն, կառավարությանն առընթեր կառույց է, իսկ շտաբի պետի նշանակումը հաստատում է պաշտպանության նախարարը:

Հ. ՉԱՔԱՐՅԱՆ

Սպանվել է իրաքյան «Ալ Ղաիդայի» առաջնորդը

Իրաքի ներքին գործերի նախարարության ներկայացուցիչ, գեներալ Աբդուլ Քարիմ Խալաֆը երեկ «հեռախուսական սուլոցի տվյալներ» վկայակոչելով հայտարարել է, որ սպանված է «Ալ Ղաիդայի» իրաքյան մասնաճյուղի առաջնորդ Աբու Այուբ ալ Մասրին:

Ամերիկյան բանակի ներկայացուցիչ, փոխգնդապետ Քրիս Գարվերն առայժմ չի հաստատել տվյալ լուրը, ասելով, թե այն մանրակրկիտ ստուգվում է: Ֆրանսպրեսը մեջբերում է գեներալ Խալաֆի այն խոսքերը, որ իրաքյան եւ ամերիկյան զորքերը կարողացել են ալ Մասրիի սպանության հետ, եւ որ նա սպանվել է գրոհայինների ներքին բախումների հետեւանքով:

Ալ Մասրիի մասին հայտնի է միայն, որ նա եգիպտացի էր եւ իրաքյան «Ալ Ղաիդայի» առաջնորդն էր դարձել 2006 թ. հունիսին՝ ամերիկյան օդուժի հարվածից Աբու Մուսաբ ալ Զարքավիի զոհվելուց հետո:

2007 թ. փետրվարին Խալաֆը հայտարարել էր, թե ալ Մասրին վիրավորվել է ոտնիկանության հետ փոխհրաձգության ժամանակ: Բայց այդ լուրը չէր հաստատվել: ԱՄՆ վարչակազմը ալ Մասրիի ձերբակալմանն օժանդակելու համար 5 մլն դոլար պարգեւավճար էր խոստացել:

Իսրայելական բանակի անհաջողության համար մեղադրվում է Օլմերտը

2006 թ. իսրայելա-լիբանանյան պատերազմում Իսրայելի բանակի կրած անհաջողության պատճառները քննող հատուկ հանձնաժողովը հրապարակել է զեկուցագիր, որով ձախողման համար մեղադրում է Թել Ավիվի իշխանություններին:

Գլխավոր պատասխանատուներ են համարվում վարչապետ Էհուդ Օլմերտը, բանակի գլխավոր շտաբի նախկին պետ Դան Հալուցը եւ պաշտպանության նախարար Ամիր Պերեցը:

«Ֆիգարո» թերթը մեջբերում է հանձնաժողովի նախագահ, դատավոր Էլիահու Վինոգրադի խոսքերը, որը հիշյալ երեք անձանց մեղադրում է «լուրջ սխալներ» գործած լինելու մեջ:

Հանձնաժողովի զեկույցը կազմվել է իսրայելցի 70 քաղաքական գործիչների եւ զինվորականների վկայությունների հիման վրա: Փաստաթղթում մասնավորապես նշվում է, որ Օլմերտը պատերազմ է սանձազերծել, չունենալով «համապատասխան հայեցողական», ինչպես նաեւ հետաքրքրաշարժ «չափազանց հավակնոտ եւ անիրագործելի» նպատակներ:

Իսկ պաշտպանության նախարար Ամիր Պերեցի մեղքն այն է, որ պատերազմի ժամանակ «սահմանափակել է մարտահրավերներին պատասխանելու կառավարության կարողությունը»:

320 էջանոց փաստաթղթի հրապարակման կապակցությամբ վարչապետ Էհուդ Օլմերտը հայտարարել է. «Անշուշտ, մենք կծանոթանանք եզրակացություններին եւ այնպես կանենք, որ Իսրայելի դեմ ուղղված նոր սպառնալիքի ծագման դեպքում նշված սխալները չկրկնվեն»:

Չնայած այս հայտարարությանը, իր հիմնած «Քադիմա» կուսակցության նախարարների առջեւ ելույթ ունենալով՝ Օլմերտը կտրականապես հրաժարվել է պաշտոնաթող լինել:

Պ. Ք.

ՎԱՇԻՆԳՏՈՆ

ԱՄՆ-ը եւ ԵՄ-ը ստեղծում են ընդհանուր շուկա

Վաշինգտոնում ԱՄՆ-ի եւ Եվրամիության ներկայացուցիչները ստորագրել են անդրատլանտյան տնտեսական համագործակցության նոր համաձայնագիր: BBC-ի տվյալների համաձայն, փաստաթուղթը նախատեսում է առեւտրի ու ներդրումների ապրանքների համաձայնեցում եւ սահմանում է միասնական ամերիկա-եվրոպական շուկայական տարածքի հիմունքներ:

ԱՄՆ-ում անցկացված գագաթաժողովում ուշադրության կենտրոնում են եղել տնտեսական հիմնահարցերը: Կողմերը պայմանավորվել են հիմնել «տնտեսական խորհուրդ», որը կանոններն ու օրենքները կմիասնականացնի չորս տասնյակ բնագավառներում, որոնցից են մտավոր սեփականությունը, ֆինանսական ծառայությունները, ընկերությունների միաձուլումը եւ ավտոմոբիլաշինությունը:

Համաձայնագրի գլխավոր նպատակներն են առեւտրի ծավալների ավելացումը ու ծախսերի կրճատումը: Վաշինգտոնում եվրոպացի ղեկավարները գոհունակություն են արտահայտել, որ ԱՄՆ-ը սկսել է ընդունել կլիմայական փոփոխությունների վտանգավորությունը եւ դրանց՝ մարդկային գործունեության հետեւանք լինելը: Մասնավորապես Եվրահանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բարոզուն ասել է. «Մենք համաձայն ենք, որ անհրաժեշտ է նվազեցնել վնասակար արտանետումները: Մենք համաձայն ենք, որ պետք է համագործակցենք»:

ԵՄ-ում նախագահող Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը ջանում է ԱՄՆ-ին համոզել, որ հարկավոր է համընդհանուր մոտեցում հանդես բերել կլիմայական փոփոխությունների խնդիրների նկատմամբ: Վերջիններս օրակարգում կլինեն նաեւ մեկուկես ամիս հետո Գերմանիայում կայանալիք Մեծ ութնյակի գագաթաժողովում:

Վաշինգտոնում նաեւ ստորագրվել է օդային փոխադրումներին վերաբերող համաձայնագիր, որն ուժի մեջ կմտնի 2008 թ. մարտի 30-ին եւ եվրոպական ավիաընկերություններին թույլ կտա թռիչքներ իրականացնել դեպի ԱՄՆ-ի ամեն մի կետ: Նոկտիսի հնարավորություն կունենան նաեւ ամերիկյան ընկերությունները:

Այդ համաձայնագրի նպատակն է իջեցնել ավիափոխադրումների սակագները թե ԱՄՆ-ում եւ թե ԵՄ-ում: Ենթադրվում է հետագայում ԱՄՆ-ի ու Եվրոպայի միջեւ ստեղծել «Ազատ ավիացիայի գոտի»: Եվրոպացիները նաեւ ակնկալում են, որ ԱՄՆ-ը կհամաձայնի վերացնել ԵՄ որոշությունների խաղաղացիներից պահանջվող այցագրերը:

Ռուսաստանն ու Չինաստանն ամենից շատ են խախտում հեղինակային իրավունքը

Ռուսաստանն ու Չինաստանը գլխավորում են մտավոր սեփականության իրավունքն ամենից հաճախ խախտող երկրների ցանկը: Այդ մասին նշվում է ԱՄՆ առեւտրական ներկայացուցչության հերթական ամենամյա զեկուցագրում:

«Կեղծված ձայնագրությունների ու տեսագրությունների թողարկման վիթխարի ծավալները եւ ինտերնետում ձայնագրությունների անօրինական տարածման վերահսկողության բացակայությունը այնպիսի խնդիրներ են, որոնք չեն կարող մտահոգություն չպատճառել», նշվում է զեկուցագրի ՈԴ-ին նվիրված մասում:

Ռուսաստանի իշխանությունները բավարար ջանքեր չեն գործադրում կեղծված արտադրանքի թողարկման դեմ պայքարելու համար: Միեւնույն ժամանակ ԱՄՆ առեւտրական ներկայացուցչության փորձագետները նշում են, որ անցյալ տարի թե՛ Ռուսաստանում եւ թե՛ Չինաստանում «նկատվել են մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ոլորտում զգալի առաջընթաց»: Առաջիկա ամիսներին ՈԴ իշխանությունները պարտավոր են տվյալ ոլորտում արմատական միջոցներ ձեռնարկել, քանի որ ուզում են երկիրը դարձնել Առեւտրի համաշխարհային կազմակերպության անդամ: Այս կապակցությամբ երկկողմ արձանագրություն է ստորագրվել ռուս-ամերիկյան բանակցությունների ավարտից հետո:

Եթե ՈԴ-ում մտավոր սեփականության պաշտպանության հետ կապված իրավիճակը չբարելավվի, ապա ԱՀԿ-ին ՈԴ անդամակցությունը կհայտնվի հարցականի տակ:

ՈԴ-ից եւ ՉԺՀ-ից բացի, մտավոր սեփականության իրավունքն առավել շատ խախտող երկրների թվում են Արգենտինան, Վենեսուելան, Եգիպտոսը, Իսրայելը, Հնդկաստանը, Լիբանանը, Թաիլանդը, Թուրքիան, Ուկրաինան եւ Չիլին: Ֆրանսպրեսը նշում է, որ 21 ուրիշ երկրներում հեղինակային իրավունքները խախտվում են նվազ չափերով:

Վենեսուելան դուրս է գալիս ՄԱՀ-ից եւ ՀԲ-ից

Աշխատավորների օրվա առթիվ ելույթ ունենալով՝ Վենեսուելայի նախագահ Ուգո Չավեսը հայտարարել է, որ իր երկիրը դադարեցնում է գործակցությունը Միջազգային արժութային հիմնադրամի (ՄԱՀ) եւ Համաշխարհային բանկի (ՀԲ) հետ:

Վենեսուելայի հեռուստատեսության եթերում Չավեսն այդ երկու կազմակերպություններին մեղադրել է «փոքր պետություններին շահագործելու» եւ «իմպերիալիստական կայսերապաշտության գործիքները» լինելու մեջ:

«Մենք դուրս ենք գալիս այդ կազմակերպություններից: Եվ մենք նրանց կստիպենք վերադարձնել այն, ինչ խլել են մեզնից», մասնավորապես ասել է նախագահը, որի խոսքերը մեջբերում է Ֆրանսպրես գործակալությունը:

Չավեսն ավելացրել է, որ ներկայումս ՄԱՀ-ը եւ ՀԲ-ն «խոր ճգնաժամի մեջ են»:

ՄԱՀ-ից եւ ՀԲ-ից Վենեսուելան դուրս բերելու որոշումը Չավեսի տնտեսական բարեփոխումների իրականացմանն ուղղված հերթական քայլն է: Ավելի վաղ նա ազգայնացրել էր Վենեսուելայի նավթաարդյունաբերությունը: 2007 թ. մայիսի 1-ից պետության վերահսկողության տակ են երկրի նավթային բոլոր ընկերությունները, այդ թվում օտարերկրացի հիմնադիրներ կամ սեփականատերեր ունեցողները:

Քանի որ Վենեսուելան մարել է ՄԱՀ-ին իր ունեցած պարտքը, կազմակերպությունից այդ երկրի հեռանալը կդիտվի որպես խորհրդանշական քայլ:

Բացի դրանից, Չավեսն իր ելույթում հայտարարել է, որ երկրում նվազագույն աշխատավարձը բարձրացվում է գրեթե 20 տոկոսով:

Վենեսուելայի նախագահը մտադիր է երկրի նավթային եկամուտներով ստեղծել այսպես կոչված Հարավային բանկ, որը պետք է ֆինանսավորի հարավամերիկյան նախագծերը:

Չախամետ Չավեսի համախոհներից է Էկվադորի նախագահ Ռաֆայել Կոռեան, որը նույնպես ՄԱՀ-ից դուրս գալու ցանկություն է արտահայտել: BBC-ն հիշեցնում է, որ վերջերս Էկվադորն արտաքսեց Համաշխարհային բանկի ներկայացուցչին:

Պ. Ք.

Նախաքրիստոնեական հայկական էթնիկ պարերը հասել են մեզ

Հայկական պարերը մինչեւ օրս անհա՞յտ են հայ հասարակությանը

Նախաքրիստոնեական ժամանակների հայկական էթնիկ պարերն անհետ չեն կորել ու հասել են մեր օրերը: Անգամ բեմադրված են, բայց հանրությանը չներկայացված: Եվ եթե հայոց գոյությամբ տարիք հաշվող այդ պարերն այսօր չունեն հանրահռչակման համապատասխան չափ, այսինքն՝ այսօրվա հայ հասարակությունը դրա կրողը չէ, ապա դա տարիներ շարունակ էթնիկ պարարվեստը երկրորդային արվեստ համարելու քաղաքականության արդյունքի է: Սրանում համոզված է Հայաստանի ազգային պարարվեստի միության (ՀԱՊՄ) նախագահ **Կարեն Գետրգյանը**: «Հայկական էթնիկ պարերը երկրորդային արվեստ համարելու հետեւանքով վերջնականապես լվածի կարգավիճակում են հայտնվել եւ այդ առնչությամբ լիակատար անտարբերությունն արդեն անհանդուրժելի է: Ով տեղից վեր կենում՝ իրեն պարուսույց է հռչակում եւ ուզածի պես աղավաղում հայկական պարը: Տեր կանգնելու ժամանակն անցնում է: Եվս 5-10 տարի, եւ հիմնովին կկորցնենք հայկական էթնիկ պարը», երեկ «Փաստարկ» ակումբում հայտարարեց Կարեն Գետրգյանը: Նա փաստեց նաեւ, որ մեծ հաճախականությամբ եկող գնացող ՀՀ մշակույթի բոլոր նախարարներին ներկայացվել է ազգային պարարվեստի զարգացման հայեցակարգ. «Բոլորն էլ պարտաճանաչ կերպով համապատասխան վարչության պաշտոնական նամակն ուղարկել են ի պատասխան: Տարբերությունը եղել է մեկը՝ նախարարի անունը: Պատասխանները պահել եմ, հետաքրքրական է»: Սա էլ ապացույց է, որ անկախացմամբ էլ հայկական էթնիկ պարերի ոչ միայն զարգացման, այլեւ ներկայացման խնդիրները չլուծվեցին:

Այլ իրականության ակնկալիքով՝ Հայաստանի ազգային պարարվեստի միությունը օգտագործելու է ընտրությունների բերած քաղաքական ակտիվության փուլը՝ հանդես գալով հայտարարությամբ, որում նախ հակիրճ կերպով փաստված է ազգային պարերի կարեւորությունը ինքնության պահպանման խնդրում, ապա. «Հայաստանի ազգային պարարվեստի միությունը խորապես գիտակցելով ազգային պարարվեստի դերն ու նշանակությունը, ինչպես մատաղ սերնդի դաստիարակության, այնպես էլ ժողովրդի ազգային հոգեւոր ժառանգական արժեքների պահպանման գործում, հուսով է, որ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, կրելով ցեղակրոնության նժդեհյան գաղափարախոսությունը, որպես մշակութային մարտավարություն ապահովելու է մեր բուն ազգային մշակույթի ներկան եւ ապագան»: 120 կոլեկտիվ միավորող միությունը, որ անկախացումից ի վեր քաղաքական, հասարակական, պետական մարմինների աջակցություն չի ստացել, Կարեն Գետրգյանի հավաստմամբ, չի բացառում այսուհետեւ ՀՀԿ իրական աջակցությունն ունենալու հեռանկարը: ՀԱՊՄ նախագահն ամենեւին էլ չի գտնում, թե պարելու համար կուսակցական պատկանելություն կամ հովանավորություն է պետք, սակայն համոզված է, որ հայկական էթնիկ պարերը, այն էլ նախաքրիստոնեական ժամանակաշրջանի, ներկայացնելու համար պետական մոտեցում է պետք, քանի որ խորհրդային տարիներին հայկական պարը տարել են օտար հունով. «Բուն հայկական պարերը նկարագրելի չեն, հիմնականում ծիսական խմբապարեր են, շատերը դրանց ֆիզիկապես պարզապես չեն կարող դիմանալ: Ընտրություններից հետո գոնե լրագրողների համար ցուցադրում կկազմակերպենք՝ կտեսնեք ու կհամոզվեք»:

Հայկական էթնիկ պարերն այդ եւ անհրաժեշտ աջակցություն ու դրա արդյունքները տեսնելու ակնկալիքով՝

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իոսիֆ Կոբզոնը Երեւանում

Երեւանի օպերային թատրոնում մայիսի 1-ին մեկ համերգով հանդես եկավ ԽՍՀՄ ժող. արտիստ, ՀՀ տուր «Մեսրոպ Մաշտոց» շքանշանակիր հանրահայտ երգիչ Իոսիֆ Կոբզոնը: Մինչ համերգը երգիչը հանդիպեց լրագրողների հետ: Այս համերգը երգչի 70-ամյակի պատվին կազմակերպված համերգային շրջագայության հայաստանյան հաստատն է: Ի. Կոբզոնը ընտանիքով այցելել եւ ծաղիկներ է դրել Ծիծեռնակաբերդի հուշահամալիրին: Երգիչը նշեց, որ հաճույքով է գալիս Հայաստան, եւ թե՛ այստեղ, թե՛ Մոսկվայում շատ հայ ընկերներ՝ ու բարեկամներ ունի: «Հայաստանի ճակատագիրը ինձ համար կարծես իմ ճակատագրի մի մասն է եւ ամեն ինչ ինձ հետ կապված է...»:

Ի. Կոբզոնը սկսել է իր համերգաշարերը 1961 թ. Բուլղարիայից ու մինչեւ այսօր շարունակում է ակտիվ կյանքով ապրել՝ աղեստը համադրելով ՈՌ դումայի պատգամավորությանն ու բարեգործությանը: Այսօր անվանի երգչի խնամքի տակ են երկու մանկատուն, մեկ մանկական դիսկոտեկ եւ այլն: Չնայած զբաղվածությանը Կոբզոնը հասցրել է ներկա գտնվել Շաղ Ազնավուրի համերգին ու Շաղին այսպես ողջույնել. «Ազնավուրը բացի այն, որ փայլուն երգիչ է, նաեւ հրաշալի մարդ է, մեծ հայրենասեր, ես հարգում եմ նման մարդկանց»:

«Ազգի» այն հարցին, թե համերգաշարի ընթացքում Ադրբեջանում եւ Վրաստանում ինչպես են իրեն ընդունել, նա ասաց՝ հրաշալի: «Այնտեղ իրենց լեզուներով չեմ երգել, իսկ Հայաստանում կերգեմ:

Ես գտնում եմ, որ ձեր երկրի լավագույն ժամանակները դեռ առջեւում են, եւ դրանում երիտասարդ սերունդն իր դերը կունենա, ու երկիրը կզարգանա»:

Իսկ ինչ վերաբերում է Վրաստանի վարած քաղաքականությանը Ռուսաստանի նկատմամբ, ապա քաղաքական գործիչներն են նման իրավիճակ ստեղծողները եւ այն ինչ եղավ ռուս-վրացական հարաբերություններում՝ պարզապես քաղաքական հիմարություն է: Իսկ իմ համերգից հետո վրաց անվանի արվեստագետները, պատերազմի վետերանները, սպորտսմենները ինձ շրջապատել էին ու շատ ջերմ մթնոլորտ էր ստեղծվել»:

«Ազգի» հաջորդ հարցին՝ թե ինքը մեծ բիզնես ունի՞ Մոսկվայում եւ Երեւանում, Կոբզոնը ասաց. «Եթե լսենք լուրերին, ապա Մոսկվայի կեսն իմն է: Իսկ Երեւանում «Դվին» հյուրանոցը Արտակինն է, ոչ թե իմը»: Իոսիֆ Կոբզոնը «Եվրատեսիլին» անդրադառնալով՝ այն անվանեց «коммерческий и политический конкурс» ու խորհուրդ տվեց. «Եթե ձեր երկրից որեւէ մեկը նախապես չիոգա երգչի մասին, որեւէ հաջողություն չսպասեք...»: Սոչի երկու ժամ տեւած հանդիպման ընթացքում Կոբզոնը շատ հետաքրքրական դեպքեր պատմեց Չեչնիայում իր համերգից հետո Շամիլ Բասաեւի հետ հանդիպումից, հայ կոմպոզիտորների հետ իր մտերմությունից եւ այլն:

Երեւանյան համերգին երգչի հետ հանդես եկան Մոսկվայի պետական ակադեմիական կամերային երգչախումբը եւ Ռուսաստանի ՆԳՆ ներքին զորքերի ակադեմիական երգի ու պարի անսամբլը:

ՄԱՐԻԱՆՆԱ ՄՈՒՍԱԵՎԱ

Կամերային նվագախումբը Հայաստանի 8 շրջաններում՝ ՄԱԿ-ի աջակցությամբ

Հայաստանի ազգային կամերային նվագախումբը (գեղ. ղեկավար եւ գլխավոր դիրիժոր՝ Արամ Ղարաբեկյան) վաղվանից՝ մայիսի 3-ից սկսյալ համերգային շրջագայություն կձեռնարկի Հայաստանի 8 տարբեր շրջաններում՝ համագործակցությամբ Հայաստանում ՄԱԿ-ի ներկայացուցչական գրասենյակի: Նախաձեռնությունը, որը կիրականացվի ամբողջ տարի, մտնում է Հայաստանի տարբեր շրջաններում ազգաբնակչությանը բարձրարվեստ երաժշտությանը հասու դարձնելու ՄԱԿ-ի ծրագրի մեջ: Այդ համերգները «կհամընկնեն» միջազգայնորեն ընդունված տոնական կամ հիշատակի օրերին, ինչպես վաղվա համերգը, որը նվիրված է մինելու խոսքի ազատության օրվան եւ կկայանա Աբովյան քաղաքում, ժամը 18-ին, Զ. Սահակյանցի անվան երաժշտական դպրոցի սրահում:

Աջակցենք Հին Ջուղայի խաչքարերի հատորի հրատարակմանը

Հարգարժան ընթերցող, վստահ եմ, որ մամուլից, հեռուստահաղորդումներից ու ռադիոհաղորդումներից բաւական տեղեկացել եք, որ վերջին 7-8 տարիների ընթացքում Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության տարածքում հիմնահատակ ավերվեցին հայկական պատմաճարտարապետական մեծ ու փոքր հուշարձանները (վանքեր, եկեղեցիներ, խաչքարեր, տապանաքարեր), որոնց ընդհանուր թիվը անցնում է 27.000-ից: Դա մի անդառնալի կորուստ ու մշակութային նախճիր է, որը իրականացրեցին Ադրբեջանի եւ Նախիջեւանի իշխանությունները: Ինչպես Հայաստանը, այնպես էլ միջազգային կազմակերպությունները՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն, Եվրամիությունը անզոր եղան կասեցնելու մշակութային այս եղեռնը, որի ընթացքում կործանվեցին նաեւ Հին Ջուղայի հռչակավոր գերեզմանատան 9-17-րդ դդ. շուրջ 4500 գեղաքանդակ ու շքեղաշուք խաչքարերը, 10-12-րդ դդ. Սբ. Ամենափրկիչ վանքը, Պոմբլոզի ժամ եկեղեցին եւ այլ արժեքներ:

Պետականորեն իրականացված այս աննախադեպ փաստով ցնցված, 2003 թ.-ից ձեռնամուխ եմ եղել Նախիջեւանի տարածքում 40 տարուց ավելի կատարած իմ հետազոտությունների ընթացքում փաստագրած բազմահազար նյութերի հիման վրա շարադրված ուսումնասիրությունների, «Բանված հայաքարի» տեսաֆիլմաշարի եւ այլ պատմաբանասիրական հատորների հրատարակման աշխատանքներին: Այդ ուղղությամբ արդեն կատարվել է զգալի աշխատանք. բարեւար-մեկենասների աջակցությամբ 2004 եւ 2005 թթ. լույս են տեսել «Նախիջեւանի վիմագրական ժառանգություն» երկու ծավալուն հատորները (դեռեւս հրատարակման են սպասում այդ շարքի եւս չորս հատոր), նկարահանվել է ֆիլմաշարի 1-ին՝ «Խզված մեղեդի՝ Ջուղա» ֆիլմը:

Այժմ հրատարակման եմ պատրաստել Հին Ջուղայի խաչքարերին նվիրված մի ծավալուն պատկերագիրք (ալբոմ), որը հայերեն եւ անգլերեն լեզուներով համառոտ տեքստերով ընդգրկում է շուրջ 700-ի հասնող ընտրված լուսանկարներ (90 տոկոսը գունավոր պատկերմամբ): Ծախսաբաս այս հատորի հրատարակումը, որի համար անհրաժեշտ է մոտ 3,5 մլն դրամ, միայն իմ միջոցներով իրականացնելը գրեթե անիրագործելի է: Այդ իսկ պատճառով այս խոսք-խնդրանքով դիմում եմ հայ ժողովրդի պատմական արժեքների վերականգնումը կարեւորող բարեգործական հիմնադրամներին, մեծահարուստներին ու գործարարներին, ազգային բարեւարներին, անհատ անձանց՝ խնդրելով դրամական աջակցություն ցուցաբերել այս հատորի տպագրման համար: Ակնկալում եմ, որ կգտնվեն այսօրինակ խնդիրներով մտահոգ կազմակերպություններ ու անհատներ, որոնք իրենց հնարավորությունների սահմաններում աջակից կլինեն Հին Ջուղայի գեղակերտ խաչքարերի այս եզակի հատորը հայագիտությանն ու հանրությանը, ապագա սերունդներին ի պահ դնելու գործին: Մանավանդ որ այս ծավալի նյութ՝ տողերի հեղինակից բացի ոչ ոք չի կարող ներկայացնել հրատարակության:

Ձեր կողմից նախատեսվող դրամական աջակցությունները կարող եք փոխանցել այդ նպատակով բացված բանկային հաշվեհամարներով՝

ա) ՀՀ դրամով- ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ, 247010011606-0200 Ա. Այվազյան,

բ) ԱՄՆ դոլար- 247010011606-0100:

Աջակցություններ ցուցաբերած կազմակերպությունների եւ անհատների վերաբերյալ ծանուցում կարվի պատկերագրում եւ օրինակներ կտրամադրվի: Անհրաժեշտ այլ պարզաբանումների եւ կապի համար հեռաձայնել՝ 091-78-80-33, 25-58-27 (երեկոյան ժամերին):

Կանխահայտ շնորհակալությամբ

ԱՐԳԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ,
Հարգելի նախագահ

25.04.2007 թ.

Տունդ կառուցիր քո հայրենիքում

«Տունը ժայռի վրա» գիրքը, որ ամփոփում է տարբեր տարիներին գրված ստեղծագործություններ, **Արսեն Բաբայանի** երկրորդ մուտքն է գեղարվեստական գրականություն: Մինչ այդ նա լույս է ընծայել «Վերջին հերիաթը» գրքույկը, տպագրվել հանրապետական պարբերական մամուլում, հեղինակ է նաեւ մարզական թեմայով գրքերի:

Առանձնակի հետաքրքրությամբ է կարդացվում «Խոստովանանք» վիպակը: Մահվան գնացքն ընթանում է անխոտոր ուղիով՝ իր հետ տանելով մեղավորների եւ անմեղների, պտտվում է (դարձ ի շրջանս յոր) ու նորից ճեղքում օրերի շղթան: Առաջին պլանում չարի եւ բարու հակամարտությունն է, ու չարը, որպես կանոն, պատժվում է, եւ պատիժը չի ուշանում: Ի վերջո, Աստծո կամքով, ոչ մի հանցագործություն չի մնում չբացահայտված, եւ այս առումով խոսուն է վիպակի բնաբաններից մեկը. «Իմ բախտը բերո՞ւմ է: Եթե զանցանք եմ գործում, մարդիկ անմիջապես իմանում են այդ մասին» (Կոնֆուցիոս):

Այլ բնույթի հակադրություն կա մյուս՝ «Տունը ժայռի վրա» վիպակում: Գլխավոր հերոսը՝ արցախյան պատերազմում զոհված մարտիկի որդի Տիգրանը, բանակից զորացրվելուց հետո ձեռնամուխ է լինում հայրական տան վերանորոգմանը: «Հասկացա, որ տունը պետք է շինել ժայռի եւ ոչ թե ավազի վրա» (Աստվածաշունչ),- ասում է նա: Մինչդեռ նրա դրկիցը, նույն օրերին, ավելի բարեկեցիկ կյանք փնտրելու նպատակով, ընտանյոք հանդերձ մեկնում է արտերկիր:

Ազնվության գեղեցիկ օրինակ է «Վան Գոգի արեւը» պատմվածքի երիտասարդ հերոսի վարմունքը: Նա հիանալի հնարավորություն ուներ յուրացնելու հանկարծամահ եղած իր բարեկամ արվեստաբանի մենագրությունը մեծ նկարչի մասին, սակայն արժեքավոր աշխատությունը հրատարակում է իրական հեղինակի ստորագրությամբ:

Չարի եւ բարու թեման ցայտուն է նաեւ «Ճայը» պատմվածքում, որտեղ հերոսն ուշ երեկոյան կոխկրտվում է կիսամերկ, փոչոտ, հայտնի չէ, թե ուր խելակորույս վազող մարդկանց ոտքերի տակ, բայց ողջ է մնում: Եվ մնում է լավատես: Ընդհանրապես լավատեսությունն առկա է այս գրքում ամփոփված բոլոր ստեղծագործություններում: Խորհրդանշական են «Ճայի» վերջին տողերը. փողոցում, բացվող օրվա հետ, ծառի բնին թիկնած թափառական գնչուն երգում է կորսված սիրո եւ հույսերի մասին...

Ա. Բաբայանի «Տունը ժայռի վրա» գիրքը կարդացվում է հետաքրքրությամբ: Աչքի են զարնում յուրատեսակ սյուժեները, անաղարտ հայերենով կիրք պատմելաձեւը եւ շարադրման տեխնիկան: Չենք կասկածում, որ գիրքն անպայման կգտնի իր ընթերցողին:

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Երեկ կայացան ֆուտբոլի Հայաստանի գավաթի կիսաեզրափակիչ ոչ-պատասխան հանդիպումները, որոնք անվանեցին գավաթի եզրափակիչի մասնակիցներին: Երեւանի «Արարատի» ֆուտբոլիստները եւս մեկ վճռորոշ քայլ կատարեցին գավաթի նվաճման ճանապարհին՝ պատվավոր մրցանակի համար պայքարից դուրս մղելով երկրի չեմպիոն «Փյունիկին»: Արարատցիները հիանալի կատարեցին իրենց առջեւ դրված դժվարին խնդիրը եւ թիմի պատմության մեջ 6-րդ անգամ իրավունք նվաճեցին վիճարկելու հանրապետության գավաթը:

Եզրափակիչում «Արարատն» ու «Բանանցը»

Առաջին խաղում գրանցված 1-0 հաշիվը որոշել էր թիմերի մարտավարությունը պատասխան հանդիպման ժամանակ: Բնականաբար փյունիկցիներն առաջին իսկ րոպեներից ձգտեցին հնարավորինս շուտ հավասարեցնել երկու խաղերի ընդհանուր արդյունքը՝ մեծ ուժերով դիմելով գրոհների: Սակայն արարատցիները պատրաստ էին դիմագրավելու մրցակցին եւ բավական հաջողությամբ չեզոքացնում էին փյունիկցիների սպառնալիքները:

Առաջին վտանգավոր պահը ստեղծվեց 21-րդ րոպեին, երբ Գեւորգ Ղազարյանը փորձեց գնդակը կախել «Արարատի» դարպասի հեռավոր անկյունը, բայց հարվածը մի փոքր բարձր ստացվեց: Հինգ րոպե անց «Փյունիկը» հասավ հաջողության: Սարգիս Հովսեփյանը մոտ 22 մետրից տուգանային հարվածով գրավեց «Արարատի» դարպասը: Բաց թողած գոլը ստիպեց արարատցիներին զգալիորեն ակտիվացնել հարձակողական գործողությունները: Կրկին առջեւի գծում լավ էին համագործակցում Մարկոսն ու Ռենատոն, որոնց աջակցում էին կիսապաշտպանները: 42-րդ րոպեին Մարկոսը հիանալի խաղաց՝ հարվածի դուրս բերելով Ռենատոյին: Սակայն վերջինս հարվածելու փոխարեն, նախընտրեց գնդակը կրկին վերադարձնել Մարկոսին, եւ գոլային պահը չիրացվեց:

Ընդմիջումից հետո դաշտում կրկին համառ պայքար էր ընթանում: «Փյունիկն» ամեն կերպ ձգտում էր խփել երկրորդ վճռորոշ գնդակը, բայց արարատցիները հմտորեն էին պաշտպանվում եւ դիմում վտանգավոր հակագրոհների: «Արարատի» մարզիչները ժամանակին թարմ ուժեր մտցրին խաղադաշտ, ինչն, ի վերջո, դրական արդյունք տվեց: 77-րդ րոպեին փոխ առաջ խաղադաշտ մտած Սարգիս Մովսիսյանը օգտվելով «Փյունիկի» դարպասապահ Խորկինի անհաջողակաս խաղից, խլեց գնդակը եւ գրավեց անպաշտպան դարպասը: Այդ գոլը, փաստորեն, վճռեց եզրափակիչի ուղեգրի հարցը, քանի որ փյունիկցիներին անհրաժեշտ էր մնացած ժամանակահատվածում խփել առնվազն երկու գնդակ: Փյունիկցիները փորձեցին կորզել հաղթանակը եւ երկու անգամ սպառնացին «Արարատի» դարպասին, սակայն Ռոբերտ Արզումանյանի եւ Հենրիխ Մխիթարյանի վտանգավոր հարվածները մի փոքր բարձր ստացվեցին: Իսկ ավելացված ժամանակում արդեն արարատցիները կարող էին խփել հաղթական գնդակը: Աջ եզրով Արթուր Ոսկանյանը սրընթաց անցում կատարեց եւ կարող էր գնդակը հասցեագրել տուգանային հրապարակ ներխուժող Մովսիսյանին, սակայն հապաղեց եւ կորցրեց գոլային ռեալ պահը:

Ինչպես, արարատցիները արժանիորեն նվաճեցին եզրափակիչի ուղեգիր: Խաղից հետո մարզիչները հետեւյալ կարծիքները հայտնեցին:

Վարուժան Սուքիասյան («Արարատ»)-Կրկին նույն կարծիքին եմ, որ չորրորդ ցիկլով շատ դժվար է խաղալ: Ամենածանր խաղացանկը բաժին է ընկել «Արարատին» ու «Փյունիկին»: Եվ հենց նման ծանրաբեռնվածությունն էր պատճառը, որ, իմ կարծիքով, այսօր երրորդ անհատական ծրագրով եւ գուցե եզրափակիչում մեկ խաղակես խաղա: Ինչ վերաբերում է մրցավարությանը, ապա տուգանային այն հարվածը, որ նշանակվեց մեր դարպասին ու ավարտվեց գոլով, նույնքիսի երկու իրավիճակ էլ ստեղծվեց հակառակորդի դարպասին, բայց մրցավարը չարձագանքեց, գուցե մի փոքր հեռու էր գտնվում: Եզրափակիչ մտած թիմը պետք է հաղթողի հոգեբանությամբ մտնի խաղադաշտ:

ՏՈՍՈՒՆԻ

Վարդան Մինասյան («Փյունիկ»)-Իսկական գավաթային լարված հանդիպում էր: Ճիշտ է, տեխնիկական խոտանը մեծ էր, ինչը լարվածության հետեւանք էր: Կարող եմ ասել, որ, ինչ-որ տեղ, մարզական բախտը ժպտաց «Արարատին»: Այժմ չեմ ուզում կանգ առնել մեր ֆուտբոլիստների թույլ տված սխալների վրա: Դրանք «Փյունիկի» ներքին խնդիրներն են, որոնց մենք առանձին կանդրադառնանք: Շնորհավորում եմ «Արարատին» եւ հաջողություն ցանկանում եզրափակիչում:

Մայիսի 9-ին կայանալիք եզրափակիչում «Արարատը» կմրցի «Բանանցի» հետ: Վերջինս Ոսկեհատում ոչ-ոքի (1-1) ավարտեց հանդիպումը «Միկայի» հետ: Հիշեցնենք, որ մրցակիցների առաջին խաղում «Բանանցը» հաղթել էր 1-0 հաշվով: Պատասխան խաղում էլ «Բանանցն» առաջինը հասավ հաջողության: Առաջին խաղակեսում թիմի վտանգավոր գրոհներից մեկը դիպուկ հարվածով ավարտեց Սամվել Մելքոնյանը: «Միկան» կարող էր դեռեւս առաջին խաղակեսում վերականգնել հավասարակշռությունը, սակայն Արմեն Շահգելդյանը չիրացրեց 11 մ հարվածը: Ճիշտ է, ընդմիջումից հետո անց նա խվեց մեղքը՝ գրավելով մրցակցի դարպասը: «Միկան» ոգեւորված հաջողությունից, ամբողջ թիմով դիմեց գրոհների՝ փորձելով հաղթանակ տոնել: Բայց «Բանանցը» հմտորեն պաշտպանվելով, խաղը հասցրեց իր համար ձեռնտու ավարտի (1-1):

Եվս չորս հավաքականներ ուղեգրեր նվաճեցին

Մոսկվայում ընթացող տափօղակով հոկեյի աշխարհի առաջնությունում եւս չորս թիմեր ժամկետից շուտ նվաճեցին հաջորդ փուլի ուղեգրեր: «A» խմբից այդ իրավունքը նվաճեցին Շվեդիայի եւ Շվեյցարիայի հավաքականները: Առաջինը սահադաշտ դուրս եկան շվեյցարացիները, որոնք մրցեցին իտալացիների հետ: Այդ խաղում հաղթողի հավակնորդը Շվեյցարիայի հավաքականն էր, որն էլ հաստատեց իր ավելի բարձր կարգը, թեեւ դժվարությամբ առավելության հասավ մրցակցի նկատմամբ (2-1): Իսկ ահա շվեդները վստահ հաղթանակ տոնեցին լատվիացիների նկատմամբ (8-2):

«C» խմբից պայքարը կշարունակեն Սլովակիայի եւ Կանադայի հոկեյիստները, որոնք եւս 2-րդ անընդմեջ հաղթանակները տոնեցին: Սլովակները 5-1 հաշվով պարտության մատնեցին Գերմանիայի հավաքականին, իսկ Կանադայի ընտրանին առավելության հասավ նորվեգացիների նկատմամբ (4-2):

Հիշեցնենք, որ «B» խմբում երկուական հաղթանակ էին տոնել Չեխիայի եւ ԱՄՆ-ի, իսկ «D» խմբում՝ Ռուսաստանի եւ Ֆինլանդիայի հավաքականները, որոնք եւս ժամկետից շուտ հաջորդ փուլի ուղեգիր են նվաճել: Ռմբարկուների ցուցակը 8 միավորով գլխավորում է ռուսաստանցի հոկեյիստ Մորոզովը: Նա խփել է 4 տափօղակ, կատարել նույնքան գոլային փոխանցում: Նրա խաղընկեր Զինովեւը վաստակել է 7 միավոր (1+6): 6-ական միավոր են վաստակել Ֆինն Կոնտիոլան եւ շվեդ Տերնստրյոմը (1+5):

Հաջորդ հաղթանակը հոբելյանական կլինի

Երեկ կեսգիշերին հայտնի դարձավ Չեմպիոնների լիգայի եզրափակիչի առաջին մասնակիցը: Ուղեգիրը վիճարկեցին «Չելսին» եւ «Լիվերպուլը»: Հիշեցնենք, որ առաջին խաղում 1-0 հաշվով հաղթել էր «Չելսին»: Այսօր «Միլանը»-«Մանչեսթր Յունայթեդ» մրցախաղում կորոշվի եզրափակիչի 2-րդ մասնակիցը: Առաջին խաղում անգլիական ակումբը հաղթել էր 3-2 հաշվով: Այդ հաղթանակը Չեմպիոնների գավաթի խաղարկություններում «Մանչեսթր Յունայթեդի» 99-րդ հաղթանակն էր: Այնպես որ, եթե Միլանում էլ հաջողությունն ուղեկցի «Մանչեսթր Յունայթեդին», ապա թիմը կտոնի հոբելյանական՝ 100-րդ հաղթանակը:

Չեմպիոնների գավաթի խաղարկություններում, որն իր պատմությունը սկսում է 1955 թ.-ից, բոլորից շատ՝ 173 հաղթանակ է տոնել Մադրիդի «Ռեալը»: 100-ից ավելի հաղթանակ հաջողվել է տոնել նաեւ Մյունխենի «Բավարիային» (115) եւ «Միլանին» (106):

ՇԱԽՄԱՏ

Անաստասյանը հաղթողներին զիջեց կես միավորով

Դուբայում ավարտվեց շախմատի շեյխի գավաթի հերթական խաղարկությունը, որի 125 մասնակիցների թվում էին նաեւ հայաստանցի 5 շախմատիստներ: Ավարտական տուրում նրանցից երկուսը՝ Տիգրան Պետրոսյանն ու Տիգրան Զոթանջյանը մրցեցին միմյանց հետ: Հաջողությունն ուղեկցեց Պետրոսյանին, որը 9 հնարավորից վաստակեց 6 միավոր եւ գրավեց 14-րդ տեղը: Հայաստանի պատվիրակներից լավագույն արդյունքի հասավ Ատոմ Անաստասյանը, որն ավարտական տուրում ոչ-ոքի խաղաց Սուսանտո Մեգարանտոյի հետ: Անաստասյանը 6,5 միավորով գրավեց 8-րդ տեղը՝ ընդամենը կես միավորով զիջելով առաջատարներին: Ոչ-ոքի ավարտ ունեցավ նաեւ Արտաշես Մինասյանի պարտիան Գոռալի հետ: Արտաշեսը 6 միավորով լրացուցիչ գործակիցներով զբաղեցրեց 22-րդ տեղը:

Հրանտ Մելքումյանը հաղթելով Շիրին Նավաբին, 5 միավորով տեղ զբաղեցրեց 48-րդ հորիզոնականում: Տիգրան Զոթանջյանը 5,5 միավորով 26-րդն էր: Ընդհանուր առմամբ մեր շախմատիստները Դուբայում վատ հանդես չեկան:

PHOTOLURE

Չորս շախմատիստներ՝ վրացի Լեւան Պանցուլայան, ադրբեջանցիներ Գադիր Հուսեյնովը եւ Մարհան Ղուլիեւը, իրանցի Ամիր Բագիերին ցույց տվեցին միեւնույն արդյունքը՝ վաստակելով 7-ական միավոր: Ավարտական տուրում Պանցուլայան ու Հուսեյնովը ոչ-ոքի խաղացին համապատասխանաբար Սադվակասովի եւ Մչեդլիշվիլու հետ, իսկ Ղուլիեւն ու Բագիերին հաղթանակներ տոնեցին Կոստուրի եւ Ստուրուայի նկատմամբ: Լրացուցիչ գործակիցներով գլխավոր մրցանակին արժանացավ Լեւան Պանցուլայան: Հաջորդ տեղերը զբաղեցրին Հուսեյնովը, Բագիերին եւ Ղուլիեւը:

Հայ ձյուդոյիստները մեդալների արժանացան

Հայ ձյուդոյիստները հաջող հանդես եկան Էստոնիայում անցկացված ձյուդոյի «A» կարգի մրցաշարում: Մեր ձյուդոյիստներից առավել հաջող հանդես եկավ երեւանցի Հակոբ Առաքելյանը: Նա 81 կգ քաշային ձյուդոյիստների մրցավեճում առավելության հասնելով բոլոր մրցակիցների նկատմամբ, կանգնեց պատվո պատվանդանի վերին աստիճանին: Հայ մարզիկներից եւս երեքն արժանացան մեդալների: Գյումրեցի Արսյոմ Բաղդասարյանը հասավ մինչեւ եզրափակիչ, որտեղ զիջեց մրցակցին ու արժանացավ արծաթե մեդալի: Ստեփանակերտցի Գոռ Ազիզբեկյանը (60 կգ) եւ արմավիրցի Արամ Ղազարյանը (73 կգ) արժանացել են բրոնզե պարգեւների:

Հայկական պատվիրակությունը մասնակցեց ուսանողական փառատոնին

Բարի ավանդույթ է դարձել «Кавказ наш общий дом» միջազգային ուսանողական փառատոնը՝ խնդիր ունենալով արտացոլել ուսանողների նվաճումները, ամրապնդել երիտասարդների կապերը, պահպանել ուսանողական միաբանության, գիտական, մշակութային, սպորտային ավանդույթները:

«Кавказ наш общий дом» փառատոնին մասնակցել են Չինաստանի, ԱՊՀ երկրների (Հայաստան, Վրաստան, Ուկրաինա), Ռուսաստանի տարբեր մարզերի եւ երկրամասերի Հյուսիսային Կովկասի հանրապետությունների ներկայացուցիչները:

Ապրիլի 15-ին Դոնի Ռոստով ժամանեց Հայաստանից հրավիրված պատվիրակությունը՝ Երեւանի ճարտարապետա-շինարարական համալսարանի ռեկտոր Հովհաննես Թոքմաջյանը, Երեւանի պետական համալսարանի պրոռեկտոր Սամվել Հարությունյանը, շուրջ 30 եւ ավելի ուսանողներ նշված բուհերից: Առաջին օրը նրանք մեկնեցին Ռոստովի մարզի Մյասնիկովսկի շրջանի հայաբնակ գյուղ Չալթիր, որն այս տարի մեծ շուքով նշեց հիմնադրման 225-ամյակը, ծանոթացան պատմամշակութային վայրերին: Հաջորդ օրերին կայացան գործնական հանդիպումներ, ստորագրվեցին գիտական, ուսանողական, մշակութային, սպորտային փոխադարձ համագործակցության պայմանագրեր:

Փառատոնի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ ապրիլի 15-ին, որին մասնակցեցին Ռոստովի պետական շինարարական համալսարանի ռեկտոր Վ. Շումեյկոն, ՀՀ գլխավոր հյուպատոս Արարատ Գոմցյանը, «Դոնի Նոր Նախիջեւան» հայկական համայնքի նախագահ Հարություն Սուրմալյանը, Երեւանի պետական ճարտարապետաշինարարական համալսարանի ռեկտոր Հովհաննես Թոքմաջյանը, մարզի գործադիր իշխանությունների ղեկավարները, բուհերի ռեկտորներ եւ ուրիշներ:

Երեւանի պետական ճարտարապետաշինարարական համալսարանը ներկայացավ 20 լավագույն մարզիկներով (շախմատ, բիլիարդ, ֆուտբոլ), որոնց վաստակը եւս մի քանի դիպլոմներով հարստացրեց իրենց համալսարանի գանձարանը: Հայաստանի կողմից դափնեկրի կոչմանն արժանացան Նելլի Կասաբովան, Մարիա Ղամբարյանը, Լուիզա Հարությունովան:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՈՎ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ ԼՊՈՒՏԱՐՏ ԲԱԶԻՆ

Դիրկ Նովիցկին ամենաարժեքավոր բասկետբոլիստն է

Բասկետբոլի ազգային ընկերակցության թիմերի գլխավոր մենեջերների միջեւ անցկացված հարցման արդյունքներով ընթացիկ մրցաշրջանի ամենաարժեքավոր բասկետբոլիստ է ճանաչվել «Դալասի» հարձակվող Դիրկ Նովիցկին: Հարցման արդյունքներով Նովիցկին վաստակել է 109 միավոր՝ գերազանցելով վերջին երկու տարիների դափնեկիր, կանադացի Սթիվ Նեշին («Ֆինիխ»), որի հաշվին գրանցվել է 82 միավոր: Լավագույն եռյակը եզրափակել է «Լեյկերսի» բասկետբոլիստ, մրցաշրջանի լավագույն ռմբարկու Կոբի Բրայանը:

Մրցանակների են արժանացել նաեւ մյուս անվանակարգերում լավագույնը ճանաչվածները: Այսպես, լավագույն մենեջերի համար սահմանված մրցանակը կհանձնվի Բրայան Կոլանջելոյին («Տորոնտո»): Լավագույն մարզիչ է ճանաչվել Էվերի Զոնսոնը («Դալաս»), նորեկ՝ Բրենդոն Ռոյը («Պորտլենդ»), պաշտպանական գծի լավագույն խաղացող՝ Մարկուս Կեմբին («Դենվեր»), լավագույն պահեստային՝ Լեանդրո Բարբոզան («Ֆինիխ»): Ամենամեծ առաջընթացի համար նախատեսված մրցանակին արժանացել է Քեփն Մարտինը («Սակրամենտո»):

Հարկ է նշել, որ գլխավոր մենեջերների կողմից ընտրյալների ցանկը ոչ միշտ է համընկնում պաշտոնական հարցման արդյունքների հետ:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԿԱՐԾԻՔՆԵՐ

Երիտասարդները ցավով են հետևում քարոզարշավին

«Ո՞ւմ ընտրել եւ ինչո՞ւ» հարցերը շրջանառվում են ոչ միայն տեսահոլովակներում ու քարոզչական անհամար աղբյուրներում, այլեւ խոսակցության նյութ են շատ հավաքույթների ժամանակ՝ տներում, խանութներում, հավաքույթներում, տրանսպորտում, անգամ զբոսանքի դուրս եկած երիտասարդների համար: Վերջիններիս հանդիպեցինք Հարավ-արեւմտյան թաղամասի կենտրոնական այգիներից մեկում: Երիտասարդները ծիծաղելով խոստովանեցին, որ իրենք նախապես որոշել էին ջերմանալ գարնանային արեւի տակ եւ հաճելի ժամանակ անցկացնել, բայց ընտրությունների մասին ծայր առած խոսակցությունը վերածվեց ժողով հիշեցնող մի բանավեճի, որի մասնակիցները խոսում էին սեփական դիրքորոշումների մասին: **«Ազգը»** միացավ երիտասարդների զրույցին եւ արձանագրեց հետեւյալը:

Մանեն մասնագիտությամբ բուժքույր է, 33 տարեկան: «Ցանկանում եմ ընտրել Ռաֆֆի Հովհաննիսյանի «Ժառանգություն» կուսակցությանը, քանի որ Ռ. Հովհաննիսյանին համարում եմ, գործի եւ ոչ խոսքի մարդ», ասում է Մանեն, որ Հովհաննիսյանին որակում է «այլը կուզես մարդ»: Պակաս կարեւոր չէ, որ նրա կուսակցության մեջ են լուրջ մարդիկ: Փաստ է նաեւ, որ Ռ. Հովհաննիսյանը բազմաթիվ ազատամարտիկների բուժօգնությամբ է աղահովել, իսկ դա փիչ բան չէ»: Քանի որ փողոցում փակցված պաստառները Մանեի վրա բացասաբար են ազդում, նա հաճույքով է նշում, որ դեռ ոչ մի տեղ չի հանդիպել Ռ. Հովհաննիսյանի գովազդային պաստառի, անգամ քարոզչական թերթիկի: Իսկ ավտոբուսների՞... Մանեն լռում է:

23-ամյա Գառնիկը առկա քաղաքական գործիչների մեջ չի տեսնում այն անձին, ով իսկապես կծառայի իր ժողովրդին ու կսիրի, ոչ թե «կկլզոի» նման: «Բացառությունն ինչ-որ չափով Ռ. Հովհաննիսյանն է, բայց վստահ չեմ, որ կընտրեմ նրան», ասում է երիտասարդը, ով ներկայիս իշխանություններին համարում է ժամանակին ռազմի դաշտում քարերի հետեւում թաքնվողներ:

«Ես Անահիտն եմ, լրագրող եմ, 23 տարեկան եմ: Հաստատ չեմ ընտրելու ո՛չ «Բարգավաճ Հայաստանին», ո՛չ «ՀՀԿ»-ին, քանի որ դա սկզբունքի հարց է ինձ համար: Վստահ եմ, նրանք առանց ընտրվելու էլ անցնելու են, ինչպես Ռ. Քոչարյանն առանց հաղթելու անցավ նախագահական ընտրությունների ժամանակ: Մտածում եմ, ընտրել կա՛մ «Իմպիչմենտ» դաշինքին, կա՛մ «Ժառանգության» թեկնածուին: Սակայն ցավով եմ արձանագրում, որ առաջիկա ընտրությունների պատճառով Հայաստանը դարձել է «ազգբորկաների» երկիր եւ կրիմինալ կինո է հիշեցնում: Ցավում եմ, որ համոզված եմ, որ ազգբորկաները շարունակվելու են»:

25-ամյա Աննան, որ Մոսկայում իրավաբանի կրթություն է ստացել, ուրախ է, որ Հայաստանի քաղաքացի չէ, չնայած այդպիսի հնարավորություն ուներ, բայց չօգտվեց նրանից: Պատճառն այն է, որ Աննան Հայաստանը համարում է ոչ ժողովրդավարական երկիր, տարբեր թատերական ներկայացումների տխուր թատերաբեմ: «Ընդդիմությունը սարսափի մեկ դեմք է՝ տարբեր երեսներով, որ արտասահմանին ցույց տան, թե դրանից էլ ունենք: Այնպես որ, եթե ես նույնիսկ քաղաքացիություն ունենայի, չէի գնա ընտրությունների»:

Արմենը 25 տարեկան է, մասնագիտությամբ երաժիշտ է եւ նույնպես ՀՀ քաղաքացի չէ: Սակայն նա էլ է հետեւում քաղաքական անցուդարձին: «Պետք չէ լայն բացել աչքերը, քանի որ առանց դրա էլ պարզ երեւում է, թե ինչ է կատարվում այստեղ: Ամեն ինչ անում են, որ ժողովուրդը խեղճուկրակ վիճակից չկարողանա դուրս գալ: Իսկ ընդհանրապես պարզ երեւում է, որ մի քանի կուսակցություններ աթոռի կռիվ են անում», ասում է նա:

Գոհարը լրագրող է, որ ցավով է հետեւում նախընտրական քարոզարշավին: «Կարելի է խղճալ այն փոքրաթիվ մարդկանց, ովքեր հավատում են այս կամ այն կուսակցությանը: Հատկապես գյուղացին չգիտի ումի՞ց օգնություն ակնկալի ու չի կողմնորոշվում: Սա ցավալի է: Իսկ ինչ վերաբերում է ինձ, քվեարկության անպայման կգնամ, բայց, ոչ ոքի չեմ ընտրելու», ասում է աղջիկը:

29-ամյա Վարդանը «Բարգավաճ Հայաստանից» է: Նա երրորդ կարգի հաշմանդամ է: Այդ հանգամանքը նա որակում է «Փառք աստծու» բառերով, քանի որ «ԲՀԿ»-ն օգնում է հաշմանդամներին եւ ուսանողներին:

Անժելան 23 տարեկան է: «Կուսակցությունները մինչ այժմ ճնած էին ու միայն նախընտրական շրջանում են հիշում ժողովրդին, ասում է նա: Հատկապես Գյումրիում նախընտրական քարոզարշավը վերածվել է բացահայտ շուկայական հարաբերությունների՝ կաշառակերներով ու կաշառատուներով: Մինչդեռ ժողովուրդը պիտի չկաշառվելու գիտակցություն ունենար՝ անկախ իր սոցիալական ծանր պայմաններից: Ես հստակ գիտեմ, որ հենց Գյումրիի մանկավարժական ինստիտուտում անձնագրեր են հավաքում», ասում է նա:

«Ծիծաղելի է, բայց փաստ, որ «բարգավաճները» անգամ հեռատացույցով ասում են ժողովրդին, եթե ընտրակաշառքը 30 000-ից ցածր է, ուրեմն ձեզ խաբում են, մեր մինիմալը 30 000-ն է», ասում է մի օրիորդ:

«Ես վախենում եմ, որ Սերժ Սարգսյանի կուսակցությունը կհաղթի այս ընտրություններում, քանի որ ես լսել եմ, որ նա մեծ գումարներ է տանով տալիս խաղատներում: Կարդացել եմ, որ աչքալուսանք են տալիս կազինոյատերերին, ասելով, որ հիմա Ս. Սարգսյանը հնարավորություն կունենա տանով տալու նաեւ պետական փողերը: Վախենում եմ եւ տագնապում, Քոչարյանը բավական չէր, հիմա էլ պատրաստվենք Ս. Սարգսյանին նախագահի աթոռին տեսնելու», ասում է աղջիկը: «Եթե Սերժը ընտրվի Հայաստանի պրեզիդենտ, ես կլքեմ Հայաստանը: Ես չեմ ուզում հանցագործ երկրում ապրել վախենալով, որ հնարավոր է՝ ես իրավիճակից դրդված պանդուխտ դառնամ», ասում է Անժելան:

Եվ մի խոսուն փաստ էլ: Բոլոր զրուցակիցներս խոսակցության վերջում խնդրեցին չտպագրել իրենց ազգանունները:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՍՏԱՄԲՈՒԼ

Մայիսմեկյան ցույցերին շուրջ հազար ձերբակալություն Ստամբուլում

Աշխատավորների համերաշխության միջազգային օրվա՝ մայիսի 1-ի խաղաղ ցույցերը թուրքական ոստիկանության բիրտ միջամտությամբ վերածվել են բախումների: Ոստիկանությունը ցուցարարների դեմ օգտագործել է արտասվաբեր գազ, ջրացան մեքենաներ եւ մահակներ: Ստամբուլի նահանգապետ Սուամմեր Գյուլերի վկայությամբ, քաղաքի տարբեր թաղերում ձերբակալվել է շուրջ հազար ցուցարար: Ոստիկանությունը միաժամանակ արգելել է ցույցերին մասնակցելու համար Անկարայից եւ շրջակա քաղաքներից ժամանողների մուտքն Ստամբուլ:

Ստամբուլում ցույցերը կազմակերպվել են քաղաքի տարբեր թաղերում: Թուրքական լրատվամիջոցները շուրջ հազար ձերբակալվածների մասին նահանգապետի վկայությունը հաղորդելիս, առանց ցուցարարների ընդհանուր թիվը հայտնելու, նշում են, որ նրանց վերահսկել է 17 հազար ոստիկան: Ինչ վերաբերում է բախումներին, ապա դրանց գլխավոր պատճառը եղել է մայիսմեկյան ցույցը Ստամբուլի ասիական Գաստրյուղ թաղում միայն արտոնելու նահանգապետարանի որոշումը:

Հակառակ որոշմանը, ցուցարարների 50 հազարանոց խումբը շարժվել է Թաքսիմի հրապարակ՝ հարգելու այն 34 սպանվածների հիշատակը, որոնք 1977 թ. մայիսի 1-ի տոնակատարություններին սադրանքի զոհ էին դարձել: Ցույցի կազմակերպիչները, որոնց թվում երկրի խոշորագույն արհեստակցական երկու միությունների հետ եղել են հասարակական եւ քաղաքական այլ կազմակերպություններ, հակառակ նահանգապետարանի որոշմանը եւ նահանգապետի նախազգուշացումներին, զոհված 34 բանվորների հիշատակն սպանության 30-րդ տարելիցին հենց Թաքսիմում հարգելու մղումով այնտեղ են շարժվել:

Նահանգապետ Գյուլերը միաժամանակ հայտարարել է, որ քեռական գործ է հարուցվելու ձերբակալվածների դեմ, որոնք խախտել են նահանգապետարանի որոշումը եւ փորձել չարտոնված ցույց կազմակերպել Թաքսիմի հրապարակում: Այդ ընթացքում արհեստակցական երկու միությունների ղեկավարները մամուլի ասուլիսում հայտարարել են, որ Թաքսիմն այսուհետեւ կոչվում է մայիսմեկյան հրապարակ: Ի դեմ, Թուրքիայում մայիսի 1-ն իբրեւ աշխատավորների տոն պաշտոնապես նշվում էր մինչեւ 1980 թ. սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջումը:

Հ. Ղ.

«Ի՞նչն է հուզում ինձ»

Լրագրողական մրցույթ դպրոցականների համար

UNICEF-ը եւ «Ազգ» օրաթերթը 10-16 տարեկան դպրոցականների համար հայտարարում են շարադրության մրցույթ՝ «Ի՞նչն է հուզում ինձ» վերնագրով: Հաղթողները կմասնակցեն *«Ժուռնալիստիկայի հիմունքներ եւ վարպետություն»* իննամսյա դասընթացին, կտպագրվեն **«Ազգ»-ի** Մանկապատանեկան հավելվածում: Աշխատանքները **մինչեւ մայիսի 8-ը** կարող եք ուղարկել susmark2002@yahoo.com էլ.հասցեին կամ բերել խմբագրություն՝ Հանրապետության 47 հասցեով: Հեռադարձ հասցեն եւ հեռախոսահամարի առկայությունը պարտադիր են:

Մրցույթի մանրամասներին կարող եք ծանոթանալ **www.azg.am** կայքէջում տեղադրված հայտարարության ծավալուն տարբերակից:

ՅՈՒՆԻԲԱՆԿԸ

առաջարկում է բացառիկ պայմաններ

HYUNDAI

մակնիշի ավտոմեքենաների առաքիչ վաճառքի համար

Հայաստանում «Յունդայ» ավտոմեքենաների ուղղակի ներկրող եւ միակ դիստրիբյուտոր՝
«ՄԱԳԱՍ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ

Պայմաններ՝ «Յունդայ»-ի բոլոր մոդելների համար

Կանխավճար՝	15 %
Մարման ժամկետ՝	6 տարի
Տոկոսադրույք՝	16 %

«ՄԱԳԱՍ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ

հասցե՝ Աճառյան 60 հեռ/ֆաքս՝ (374-10) 581607 բջջ.՝ 091-419238, 093-659004
e-mail: magas@arminco.com

"LUXS KENCAX" SERVICE CENTRE

ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՇԽԱՏԱՆՔԻ
կենցաղային սարքավորումներ
վերանորոգող բարձրակարգ վարպետների

Հասցեն՝ Գ. Նժդեհի 56
Հեռ. (010) 445650, (093) 456888

ՎԱՐՁՈՎ ՏՐՎՈՒՄ Է

մեկ սենյականոց բնակարան Տիգրան Մեծ պողոտայում:
Զանգահարել՝ 576267 հեռախոսահամարով:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

2 սեն. բնակարան Կիեւյան փողոցում: 63 քմ,
2-րդ հարկ, քարե շենք: 27-01-02, 093062061

ՁՈՎԱՅԻՆ ՀԱՄԱՐ ՅԱՆԳՆԱՀԱՐԵԼ՝ 58-28-60

Լրատուական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ»-ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 1.05.2007, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: